

9(44)
4-94

դ. դ. ԿՈՒՆՏԵ

**ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ
ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ 11-ՐԴ ԴԱՐՈՒՄ
ՅԵՎ ԱՌԱՋԻՆ ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔԸ**

(Ոժտանդակ նյութեր հեռակայաներին)



~~2016~~
1372



Պատ. խմբագիր՝ Հ. ԽՈՒՇՈՅԱՆ

Թարգմ. Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

Սրբագրիչ՝ Գ. ՎՈՍԿԱՆՅԱՆ



19479

Գլավիտ 4—8236 հրատ. № 13 պատվ. № 32 օրրամ 2000

Հանձնված է արտադրության 5 մայիսի 1937 թ.
Ստորագրված է տպելու 11 մայիսի 1937 թ.

Ուսուցիչներին վարակավորման էնտրիառուտի տպարան,
Յերևան, Մարքսի վողոց 37

Առաջին խաչակրաց արշավանքը՝ արևմտա-յեվրոպական, գերազանցապես ֆրանսիական ասպետների ու գյուղացիների նշանակելի մասսայի արշավանքը ղեկավարեց Արևելք, վոր սովորաբար մեկնաբանվում է իբրև Արևմուտքի ու Արևելքի դարավոր պայքարի մի փուլ՝ քրիստոնեական աշխարհի սահմանների վրա խլամների հետ առաջացած վորևե առանձին լարման արդյունք չեր: Փոքր Ասիայի սելջուկյան պետութուններն արդեն վաղուց դադարել էին Բյուզանդական կայսրության համար սպառնալիք լինելուց: Ալեքս Կոմնենիոսը նույնիսկ կարողացավ դաշինք կրնքել Նիկիայի սուլթանի հետ Զայուսնիայի ռազմատենչ եմիր Զախի դեմ: 1087 թ. ճենովացիք ու պիզացիք գրավեցին Մաքդոնիան, վորը մուսուլմանների կարևորագույն նավահանգիստներից մեկն էր Աֆրիկայում: Սիցիլիայի նվաճումը նորմանների կողմից տեղի չեր ունենում լրիվ ընթացքով, և 1091 թ. ընկավ Բուսերը՝ արարների վերջին ամբողջ Սիցիլիայում: 1085 թ. կաստիլցիք Իսպանիայում գրավեցին Տոլեդոն: Ի վիճակի չլինելով զիմանալու քրիստոնյաների հարձակմանը, իսպանական արարներն ոգնության կանչեցին աֆրիկյան ռազմիկ մուրաբեուներին: Նրանք Յուսուֆ-իբն Տաշֆիլի ղեկավարությամը հանդես յեկան Իսպանիայում և Զալսկի մոտ՝ Բադախոզ քաղաքից վոչ հեռու հաղթեցին քրիստոնեական զորքերին: Բայց Աֆրիկայի ներքին խառնակութուններն ստիպեցին Յուսուֆին իր զորքով հանդերձ հետ դառնալու, և չերբ 1090 թ. նա նորից յերևաց Իսպանիայում, այլևս վոչ մի նոր հարձակում քրիստոնյաների վրա տեղի չունեցավ:

Իննսնական թվականները՝ իսպանական եպոսի հայտնի հե-

լուս Սիզի գործունեյության տարիները, համենայն դեպս արաբների կողմից սպառնացող առանձին վտանգի տարիներ չեյին: Այս պատճառով անհասկանալի չե, թե ինչու Շալանդոնը զրանում է, վոր «մուսուլմանական վտանգն Իսպանիայի կողմից, անտարակույս, այն վճռական փաստն էր, վոր վորոշեց Ուրբանոս 2-րդի վճիռը»¹⁾: Հնարավոր է, վոր Շալանդոնն այսպիսի յեզրակացության հանգել է Հիբերա Որանացու հետեյալ հատվածի հիման վրա. «Վորովհետև հույների թագավոր Ալեքսը մշտապես աղաչում էր նրան, բայց առանձնապես այն պատճառով, վոր ամբողջ քրիստոնեյության համար ընդհանուր վտանգ էր սպառնում հեթանոսների ամենորոյս հարձակումներից, վորովհետև նա լսել էր, վոր սարացիները շատ հաճախ արտելքներ են կատարում դեպի Իսպանիա, Ուրբանոսը վորոշեց գնալ Ֆրանսիա»: Բայց այս հատվածն իր անորոշությամբ սպացուցում է, վոր ուղղակի սա հեղինակի անհիմն յենթադրությունն է: «Զրույցներ Անտիոքի մասին»-ի մեջ «ալորավիդներին» մասին հիշատակվում է միայն այնտեղ, վորտեղ սխեմատիկ կերպով թվարկվում են զանազան մուսուլմանական ժողովուրդներ: Վոչ Փոքր Ասիայում, վոչ Աֆրիկայում, վոչ էլ Իսպանիայում 90-ական թվականներին պաշտպանության արտակարգ միջոցների կարիք չկար»²⁾:

XI դարում Արևմուտքը խաղաղ առևտրական և կուլտուրական զարգացած կապեր ուներ մուսուլմանական աշխարհի հետ: Իտալիայում և Հունդարիայում ապրում էյին շատ մուսուլման վաճառականներ: Ամալթացիք առևտուր էյին անում Սիրիայի հետ և իրենց հյուրանոցներն ունեյին ինչպես Անտիոքում, այնպես էլ Յերուսաղեմում: Նորմանների կողմից Ամալթան նվաճվելուց հետո նրանց առևտուրը Բյուզանդական կայսրության հետ մեծ դժվարությունների յիբ հանդիպում և չեր կարող մրցել Վենետիկի առևտրի հետ: Յերբ 1087 թ. Բարի քաղաքի առև-

¹⁾ Chalandon, Histoire de la première croisade, Paris, 1925, ԿՁ 229.

²⁾ Altamira, Spain 1034—1848. The Cambridge Med. History, 6 5., 1929, ԿՁ 396; Guibertus Novig abb., Hist. Hierosol., R, 4-րդ 5., ԿՁ 135; La chanson d'Antioche, Paris, RC, 1848, 2-րդ 5., ԿՁ 139, 148, 162, 163.

տրականները փոքրասիական Մյուրբա քաղաքում գողացան Նիկոլայի մասունքները, ապա Անտիոքում նրանք ընդհարվեցին վենետիկցիների հետ: Անհետաքրքրական չե այն հանգամանքը, վոր Սիրիայի հետ առևտրական աշխուժ կապեր ունեցող ամալթացիք նմանապես աշխուժ կապեր ունեյին հարավային Ֆրանսիայի հետ: 80-ական թվականներին նրանք արդեն իրենց հյուրանոցն ունեյին Ալբայում: Ճենովացիք նույնպես առևտուր էյին անում Արևելքի հետ. որինակ Մայնցի յեպիսկոպոս Զիգֆրիդը 1065 թ. ճենովական նավով գնաց Սիրիա: Հայտնի յեն Սիցիլիայի մուսուլմանների ու քրիստոնյաների լավ փոխհարաբերությունները:

Այսպիսով 11-րդ դարը բնավ մուսուլմանների հետ առանձնապես լարված փոխհարաբերությունների շրջան չէր¹⁾: Ու թեև առևտուրն Արևելքի հետ հասավ զարգացման վորոշակի մակարդակի, այնուամենայնիվ, նա չհասավ մինչև այնտեղ, վոր նրա հետագա բարգավաճման համար հարկ լիներ ինչ վոր զինված միջամտության: Միանգամայն ճիշտ է նկատում Շաուբեն. «Առևտրական նկատառումները զեր չեյին խաղում խաչակրաց մեծ արշավանքն առաջացնող զրգապատճառների մեջ»²⁾:

11-րդ դ. 90-ական թվականներին քրիստոնյաների զրությունն Արևելքում չեր կարող առանձին յերկյուղ հարուցել: 1010 թ. Հաբիմ խալիֆի ժամանակ Սիրիայի քրիստոնյաները լուրջ հետապնդվում էյին, և արեմտայեվրոպական աղբյուրները բավականաչափ կոնկրետ պատմում են այն ճնշումների ու քաժաճանքների մասին, վորոնց յենթակվում էյին քրիստոնյաները: Ֆրանսիայում հենց այդ ժամանակ հրյաներին մեղադրում էյին այն բանում, վոր նրանք իբրև թե խալիֆին զրգուում էյին քրիստոնյաների դեմ և նրան տեղեկացնում Ֆրանսիայում արաբների դեմ պատրաստվող արշավանքի մասին: Այս մեղադրանքների մեջ նույնիսկ ուզում էյին լուրեր տեսնել առաջիկա խաչակրաց արշավանքի վերաբերյալ: Իսկ իրականում սա հերթա-

¹⁾ Heyd, Gesch. des Levantehandels im Mittelalter, Stuttgart, 1879, 1 5., ԿՁ 49, 93, 112—138. Gesta cons. Andegavensium, R, 12-րդ 5., ԿՁ 256. Schaube, Handelsgeschichte der romanischen Völker, München, 1906, ԿՁ 122,

²⁾ Schaube, հիշ. աշխ., ԿՁ 122:

կան մի փորձ եր միայն մասսաների դժգոհությունը հրայաների վրա բարդելու համար: Միրբայի քրիստոնյաների բուն հալածանքների պատճառը լրիվ պարզված չէ, բայց հավանաբար, այդ պատճառը Միրբայի ներքին պայմանների և յեզիպտական խալիֆի ու Բյուզանդիայի փոխհարաբերությունների մեջ է: Համենայն դեպս, բնորոշ է այն, վոր յերբ 1012 թ. ապստամբած բեզուխները ժամանակավորապես աիբացան Միրբային, նրանք իսկույն վերացրին քրիստոնյաների ամեն մի ճնշում: Հալածանքների շրջանն արագ անցավ: Քրիստոնյաների տանելի դրությունը չփոխվեց նաև այն ժամանակ, յերբ թուրքերը նվաճեցին Միրբան ու Պաղեստինը: Միայն այն ազդյունները, վորոնք արդեն կապված են խաչակրաց արշավանքի հետ, խոսում են ուխտավորներից թուրքերի վերցրած ծանր հարկերի մասին, Գիլյոմ Տիրացին գրում է. «Յեքր ուխտավորները հազարավոր վտանգներ հաղթահարելով թշնամական յերկրի վրայով հասան Յերուսաղեմ քաղաքին, ապա նրանց արդեւլում էր քաղաք մտնել, յեթև նրանք դռնապաններին չվճարեյին սահմանված հարկը՝ մի վոսկեդրամի չափով»: Ահա ամբողջը: Այդ նույն Գիլյոմ Տիրացին գրում է, վոր թուրքերը «ծանր հարկեր էյին վերցնում ինչպես արաբներից, այնպես էլ ուխտավորներից ու սեղական քրիստոնյաներից»: Հարկերի վերաբերյալ նույնպիսի դանդաղաներ են լսվում բյուզանդական իշխանությունների վերաբերմամբ: Վիկտոր Յւրդ պապը 1086 թ. գրում է Բյուզանդիոն. «Ձխտակով արդեն քո պետության ուրիշ վայրերի մասին, յերկու վայրում ուխտավորներն այնքան են ճնշվում, վոր նրանցից յերեք վոսկեդրամ է վերցվում ձիու համար և նույնքան՝ յերկու հետևակի համար: Բացի սրանից, նրանցից խլում են ձիերը և ամեն կերպ նրանց տանջում ու քամահարանքի յենթարկում»¹:

Արևելքի մուսուլմանական պետությունները Մելիք-շահի և նրա մինիստր Նիզամ ալ Մուլքի մահվանից հետո գտնվում էյին կատարյալ քայքայման վիճակում, վորը հետագայում խաչակիրների համար խիստ հեշտացրեց Միրբայի նվաճումը: Արա-

¹ Radulfus Glaber, Francorum historia, R, 10 հ, էջ 152, Quillelmus Pyrius, Belli sacri historia, RC, 1 հ, էջ 484: Epist. Victoris 3, Migne, P. L., 149 հ, էջ 961:

բական պատմարան կամալեզգիների սեղեկություններով Անտիոքը քրիստոնյաներին հանձնեց վոմն զինագործ Ջարադը, վորովհետև Անտիոքի եմիր Յադի-սիանը նրա վրա անիրավացի հարկ էր դրել: Հայ պատմարան Մատթեոս Ուսնայեցին հաղորդում է, վոր խաչակրաց արշավանքի ժամանակ մաստայորեն զավաճանում էյին թյուրքերը: Այս բոլորը ցույց է տալիս դասակարգային հակաությունների ու քայքայման խորությունը սիրիական պետություններում¹:

60-ական, 70-ական և 80-ական թվականներին արաբների դեմ մղված պատերազմին մասնակցում էյին վոչ միայն այն պետությունները, վոր անմիջականորեն գտնվում էյին արաբական հարձակման սպառնալիքի տակ, այլ նմանապես և քրիստոնեյական ուրիշ պետությունների զինված շոկատներ: Առանձնապես նշանակելի յե Ֆրանսիական ասպետների մասնակցությունն Իսպանիայի պատերազմներին (1063 թ., 1073 թ., 1075 թ., 1087 թ.): Կլյունիի վանքը, Լիմոսի սուրբ Մարցիայի վանքը և ուրիշներն իրենց բաժինն էյին ստանում Ֆրանսիական ասպետների պատերազմական ավարից: Բնորոշ է, վոր Հյուզո Ֆլյորիացու սեղեկություններով այս ասպետները շատ էյին վրդովվում, յերբ 1087 թ. նրանք ուշացան, այսինքն Իսպանիա ժամանեցին արդեն արաբների պարտությունից հետո: «Նրանք մասն Իսպանիա, շատ ավերածություններ ու կողոպուտներ արին և վերադարձան տուն», կնշանակի, փոխանակ արաբների կողոպուտում էյին իսպանացի քրիստոնյաներին: Ճենովացիք ու պիզացիք մասնակցում էյին Իսպանիայի Տորտոզա քաղաքի նվաճմանը (1092 թ.): Բայց այս բոլոր պատերազմների մեջ չկա այն, ինչ բնորոշ է առաջին խաչակրաց արշավանքի համար՝ մասսայական ժողովրդական շարժումը²:

¹ Stevenson, The First Crusade, cambr. Med. History, 5 հ., 1926, էջ 264; Chalandon, նշ. աշխ. էջ 223; Kemaleddin, Crème de l'hist. d'Alep, RC, orient., 3-րդ հ., էջ 378; Mathaeus Edessenus, RC, I հ. հայերեն, էջ 42; Luchaire, Les premiers Capetiens, էջ 85.

² Radulfus Glaber, հիշ. աշխ., էջ 52; De Vic et Vaissette, Hist. generale de Languedoc, Toulouse, 1872—1905, II հ., էջ 144; Hugo Floriacensis, Reg. Franc. actus, R, XII հ., էջ 797; Schaube հիշ. աշխ., էջ 64. Kemaleddin, հիշ. աշխ., էջ 581; Epistola Gerberti, R. X հ., էջ 42:

Մինչև 11-րդ դարի 90-ական թվականների կեսը խաչակրաց արշավանքի վոչ մի լուրջ պլան չկար: Հերբերտի՝ պիզանցիների ուղղված խոսքերում (999 թ.)—«Յեւ, Քրիստոսի գին՝ վոր, յեզիր զորոշակիր ու մարտիկ»—յերբեք չի կարելի ժխտել վորպես խաչակրաց արշավանքի կոչ: 1074 թ. Գրիգոր 7-րդը գրում էր բուրգունդական կոմս Գիլյոմին. «Մնգրում ենք ձեզ և ստիպում պատրաստել ձեր զորքը հոմեյական յեկեղեցուն ոգնելու համար, վորպեսզի հարկ յեղած դեպքում նրա հետ միասին գաք այստեղ սուրբ Պետրոսին ծառայելու և խնդրում ենք ձեզ նույն բանը հիշեցնել Տուլուզի կոմսին և ուրիշներին, վորոնց դուք գիտեք, իբրև սուրբ Պետրոսի հովատարիմների...զորքերի այս բազմութունը մենք հոգ կուանենք հովաքելու վոչ թե նրա համար, վորպեսզի թափենք քրիստոնյաների արյունը, այլ նրա համար, վորպեսզի նրանք, տեսնելով բանակը, վախենան կռվելուց և հեշտությամբ յենթարկվեն արգարությանը: Մենք հուսով ենք, վոր սրանից ուրիշ ոգուտ կարող և լինել, այն է՝ խաղաղեցնելով նորմաններին, մենք կկարողանանք դնալ կոստանդնուպոլիս քրիստոնյաներին ողնելու, վորոնք շատ հաճախ ստապում են արարների հարձակումներից և ազերսում են մեղ ոգնել իրենց»: Պարզ և, վոր այստեղ Արևելք արշավելու միտքը ծագում է միայն հարևանցիորեն և վոր այս նամակի խսկական նպատակն է ոգնութուն ստանալ նորմանների դեմ կռվելիս: Յերբ Պուատիսի կոմսը գրեց արշավանքի գնալու իր պատրաստակումության մասին, Գրիգոր պապը նրան պատասխանեց այսպես. «Տվյալ մոմենտին յես հարմար չեյի պ ձեր ձեզ վորեն վորոշակի բան գրել այս արշավանքի մասին: Վորովհետև ասում են, թե Արևելքում քրիստոնյաներն աստծու ոգնությամբ դեն են շղթաել հեթանոսներին, և մենք հետագա գործողությունների վերաբերյալ դեռևս սպասում ենք աստվածային խորհրդին»:

Նորմանական վտանգն անցավ, անցավ նաև պապի Արևելք արշավելու միտքը¹: Ուստի Բրեյեն անհիմն կերպով և Գրիգորի այս մտքերն անվանում խաչակրաց արշավանքի առաջին

1) Epist. Gregorii 7, Migne, P. L. 148 հ., էջ 325, 360.

պլան¹): Ռյորիխտը բյուզանդական կայսեր միջնորդության և նրան ոգնելու համար Գրիգոր 7-րդի՝ արևմտայնվորոպական զորքը հովաքելու պատրաստակումության մեջ նույնպես տեսնում է խաչակրաց շարժման սաղմ²): Շալանդոնը գտնում է, վոր պապերը, թեկուզ և պատերազմի միջոցով, ուզում էյին վերադարձնել իրենց իշխանության տակ արևելյան յեկեղեցին և վոր նրանց այս ձգտման մեջ հարկավոր է վորոնել խաչակրաց արշավանքների ծագումը³): Աղբյուրները հիմք չեն տալիս այսպիսի պնդումների համար: 1083 թ. Ալեքս Կոմնենիոսը Յերուսաղեմի պատրիարք Յեփիմեյին ուղարկում է Բոհեմունդ Մարասի մոտ Բրեյեյի կարծիքով, դեսպանության համար այս անձնավորության ընտրությունը ցույց է տալիս Ալեքսի մտադրությունը Բոհեմունդին ուղարկելու Սիրիա⁴):

Չբացասելով բյուզանդական կայսեր այսպիսի մտադրության հնարավորությունը, այնուամենայնիվ այստեղ էլ չի կարելի գտնել խաչակրաց արշավանքի վորեն լուրջ պլան: Ել ավելի քիչ կարելի չի այսպիսի պլան նկատել Ռյորիտ Գլիսկարի կեղծավոր խոսքերում, վոր նրան վերագրում է Որդերիկ Վիտալին. «Յես վորոշել եմ ասածու ոգնությամբ կաթոլիկ զինվորների միջոցով նվաճել Կոստանդնուպոլիսը, վորը պատկանում է պատերազմի անընդունակ, նրբացած ու այրասերված ժողովրդի: Այս խոսք զինվորները կկարողանային թյուրքերից խլել Յերուսաղեմ քաղաքը և հեթանոսներին հաղթելուց հետո ընդարձակել քրիստոնեյական կայսրությունը: Այս նպատակով եմ յես սկսել այս մեծ ու վտանգավոր գործը»: Այս խոսքերի մեջ Լյուշերը միանգամայն անտեղի չի տեսնում «խաչակրաց արշավանքի առաջնորդի կրոնական տոն»,—միթե վորեն մեկը կհավատա, վոր Յերուսաղեմը վորեն գեր է խաղացել Գլիսկարի՝ Բյուզանդիայի վրա հարձակվելու մեջ⁵): 1089 թ. Ուրբանոս 2-րդը հայտարարեց

1) L. Bréhier, L'église et l'Orient au moyen âge, Paris, 1925, էջ 52:

2) Röhrich, Geschichte des ersten kreuzzuges, innsbruck, 1901, էջ 13:

3) Chalandon, հիշ. աշխ., էջ 304:

4) Bréhier, հիշ. աշխ., 53:

5) Order. Vitalis, Hist. ecclesiastica, MGSS, XX հ., էջ 64; Luchaire, հիշ. աշխ., էջ 21:

խաղանական ասպետներին, վոր Տարասկոնա քաղաքի նվաճումը կրոնական տեսակետից հավասարեցվում է Յերուսաղեմ ուխտագնացութեան: Բայց պատմաբաններն ամենից ավելի նշում էլին Ալեքս Կոմինիոսի միջնորդութունը Ֆլամանդրիական կոմսի առջև, իբրև խաչակրաց արշավանքի պլան: Ռուսական բյուզանդագետներ Վ. Գ. Վասիլևսկին և Ֆ. Ի. Ուսպենսկին այս նամակը համարում էլին իսկական, իսկ Ռիանը համարում էր կեղծ: Շարանդոնը, իսկ ըստ էություն նաև Հագենմայերը գտնում են, վոր նամակն այն ձևով, վորով նա պահպանվել է, կեղծ է, կողմված արդեն առաջին խաչակրաց արշավանքի շրջանում ազիտացիոն նպատակներով, բայց իբրև գոյություն ունեցած իսկական նամակի հիման վրա: Հիրավի, նամակի վոճը քիչ է նման բյուզանդական կայսեր պաշտոնական վավերագրի: «Յես ինչ ասեմ բարձր դասի նկայական հարստությունների մասին, յեթև արդեն սովորական վաճառականների հարստությունները վոչ վոք չի կարող հաշվի առնել: Թե նախկին կայսրների ինչքան գանձեր կգանվեն, այս վոչ մի լեզու պատմել չի կարող... Ուստի շտապեցեք ձեր բոլոր մարդկանցով և կովեք ամբողջ ուժով, վորպեսզի այսպիսի գանձերը չընկնեն թյուրքերի ու պեչենեգների ձեռքը»: Իսկպես, բյուզանդական կայսրը չէր կարող այսպես գրել, չէր կարող ուղղակի հրավիրել մարդկանց կողոպտելու Կասանդոնուպոլիս: Գիզելբերտ Մոնացին հայտնում է, վոր Ալեքսը Ֆլամանդրիական կոմսին դադանի յե գրելը Ըստ յերևույթին, այս մասին լուրերը ստրածվել են, և այն նամակը, վոր հասել է մեզ, արդեն հանդիսանում է բնագրի հանրամատչելի ազիտացիոն վերածշաղկումը: Ալեքսն ըստ յերևույթին, ուղղակի խնդրել է վարձկաններ ուղարկել, վոր Ռոբերտ Ֆրիդը նրան խոստացել էր Կասանդոնուպոլիսում գտնված ժամանակ և վորոնք 90-ական թվականներին առանձնապես հարկավոր էլին կայսեր՝ պեչենեգների հարձակման վտանգի պատճառով¹:

Յեվ այսպես, մինչև 90-ական թվականների կեսերը խաչակրաց արշավանքի վոչ մի պլան չկար, ինչպես և նմանապես 90-ական թվականներին վոչ մի առանձին լարվածութուն չկար

մուսուլմանների հետ ունեցած փոխհարաբերություններում: Առաջին խաչակրաց արշավանքի պատճառները չի կարելի վորոնել քրիստոնեական աշխարհի արտաքին սահմաններում, դրանք պետք է վորոնել Արևմտյան Յեվրոպայի հենց ֆեոդալական հասարակության դասակարգային հակասությունների մեջ:

2

11-րդ դ. Ֆրանսիայում գյուղատնտեսութունը զուտ գրանվում էր բավական ցածր մակարդակի վրա: Հաղորդակցության ճանապարհները վատ վիճակի մեջ գտնվելու հետևանքով ամենուրեք մշակվում էլին բոլոր անհրաժեշտ բույսերը՝ առանց հաշվի առնելու բնական պայմանները. այնպես վոր, որինակ, Բրետանում կային խաղողի այգիներ: Միայն 40 հեկտար և ավելի մեծությամբ հողամասերը մշակվում էլին գութանով. իսկ ավելի փոքրերը՝ թորխերով: Յեռոգաշտի հետ միասին զուտ գյուղյուն ունեք անտեսության՝ հողը հանգիստ թողնելու սխտեմը: Գյուղացիական անտեսությունները շատ մանրատված էլին, առանձնապես հարավում, վորտեղ արդեն ամենին լրիվ հողաբաժիններ (նաղելներ) չեն հանդիպում: Բերքն ավելի չէր, քան ներկայիս բերքերի կեսը կամ մի յերրորդ մասը: Գյուղացիներն ստիպված էլին այս բերքի 20-ից մինչև 50%՝ ըստ ֆեոդալների¹): Գյուղացիների համար մի առանձին պատուհաս էլին «ժամանավոր» անընդհատ պատերազմները, վորոնց պարզ ստրատեգիան հանդիսանում էր թշնամի ֆեոդալի գյուղացիների կողոպտումը: Աղբյուրները լի յեն սրան վերաբերող գանգատներով: «Այս զղյակը մի դժբախտություն էր նրան մտաիկ ապրող բոլոր գյուղացիների ու քաղաքացիների համար»²): «Այն ժամանակ փոխադարձ թշնամանքի պատճառով ամբողջ Ֆրանսիայում խառնակություն էր. ամենուրեք հաճախակի կողոպուտներ, բոլոր ճանապարհները վտանգավոր են, անվերջանալի հրկիզումներ», ասում է Հիրբերտ Որանացին: «Այն ժամանակ (1096 թ.) սարսափելի խառնակություն էր տիրում նորմանական ազնվականու-

¹) Sée, Les classes rurales et le régime dominal en France, Paris, 1901, էջ 542; Lamprecht, Beiträge zur Geschichte des frauz. Wirtschaftslebens im Mittelalter, Leipzig, 1886, էջ 21, 37, 48:

²) Gesta episc. Camerac, R. 13-րդ. հ., 1096:

¹) Hagenmeyer, Kreuzzugsbriefe, innsbruck, 1901, էջ 10—44, 130—136; Giselbertus Montensis, Chronicon Hannoniae, R, հատ. 13-րդ, էջ 548:

թյան մեջ... Հրկրգումներն ու կողոպուտներն ամայացնում էյին ամբողջ հայրենիքը: Շատ ու շատ բնակիչների ստիպում էյին փախչել, յեկեղեցիները դադարի էյին մնում քահանաների փախչելու հետևանքով... կովի բնածին ծարաֆն այնպես էր իշխում, վոր գյուղացիներն ու խաղաղ բազաբացիք չէյին կարող հանդիստ նստել իրենց տներում¹⁾: «Այն ժամանակ ամբողջ Ֆլանդրիայում ամեն որ տեղի էյին ունենում սպանություններ ու մարդկային արյուն անկուշա հեղում... սպանություններն ու վրբեժի այնպիսի մոլեգնություն, վոր հաճելի էյին համարում մըշտապես արյուն թափելը, և վախկատություն ու անպատվություն համարելին գեթ մի որ հեա կենալ սպանությունից»²⁾: Մովինյեյի յեղբակացությամբ, Հարավային Ֆրանսիան համարյա չորս դար շարունակ հանդիստ չուներ, իսկ 11-րդ³⁾ վերջին անկարգությունը հասավ իր ամենարարձր կետին⁴⁾: 1090 թ. Սան Ժերմեն քաղաքի շուկան փոխադրվում է Մյուրեյի գլխակր, վորովհետև նրա վրա հաճախ հարձակվում էր Տուրայի կոմսը: 1096 թ. Ռոբերտ Պերոնացին գանդառվում է Արլի յեպիսկոպոսին նրա համար, վոր նրա հպատակներն Արլի շուկան գինի աանելիս ճանապարհին կողոպտվում են մյուս ֆեոդալի կողմից: Հայանի յե, վոր նույնիսկ Ֆրանսիայի թագավոր Ֆրիսլավ 1-ինն իր մահվանից միայն քիչ առաջ կարողացավ գրավել Ռլեանի ճանապարհին գտնվող մի գլխակ (Մոնլերի), վորը մինչ այդ խանդարում էր այդ ճանապարհի նորմալ յերթեկությունը⁵⁾:

Այս «մտանավոր» պատերազմների պատճառների մասին մենք յեղբակացություն կարող ենք անել Մարտերի «Միցիլիայի պատմության» գեթ հետեյալ տեղից. «Վորովհետև Տանկրեդոս Ողվիլացու վորդիները տեսնում էյին, վոր յերբ նրանց զբացիները մեռնում են, ապա նրանց վորդիներն սկսում են վիճել միմյանց հեա, և շատերի միջև բաժանված կալվածքներն այլևս չեն

¹⁾ Order. Vitalis, R, 12-րդ հ., 663.

²⁾ Hariulfus, Chronicon Gentulensis abbatis, R., հ. 12-րդ, էջ 58:

³⁾ De Vic et Vaissette, հիշ. աշխ., 7-րդ հ., էջ 142:

⁴⁾ Նուլյն տեղում 5 հ., էջ 379 R, 15 հ., էջ 180; Luchaire, հիշ. աշխ., էջ 172:

բավարարում բոլորին, ապա նրանք, սրանից խուսափելու համար վորոշեցին, վոր ամենից ավագներն ու ուժեղները պետք է թողնեն հայրենիքը, զինվորական ծառայության մեջ մասնեն¹⁾: Ազքատացած գյուղացիությունը չէր կարող բավականաչափ յեկամուտներ տալ խիստ բազմացող ֆեոդալական ընտանիքներից յեկածներին: Հաղիվ թե մենք սխալվենք, յեթե Ֆրանսիայի ամբողջ ասպետական չքավորության վրա տարածենք այն գնահատությունը, վոր տալիս է Վիլհելմ Մարմսբերացին բրետոնացիներին. «Այս մարդիկ տանն աղքատ են և զժվարությամբ են վատտակում պանդխտության մեջ: Յեթե նրանց վճարես, նրանք չեն հրաժարվի թե անարգարացի կովից, և թե նույնիսկ կովից իրենց հարազատների դեմ: Լավ վարձատվությամբ նրանք պատրաստ են ամեն ինչի»²⁾: Լյուշերը ճիշտ կերպով բնորոշում է ֆրանսիական հասարակության այս խավի գրությունը. «Ինչպես հող տալ այս բոլոր աղաներին: Միշտ չե, վոր հնարավոր էր նրանց քահանա դարձնելով ազաավել նրանցից: Յեթե կալվածքը փոքր է կամ անբավարար, ապա կրտսեր վորդիներն իրենք պետք է իրենց համար բախտ վորոնեն և կալվածք նվաճեն ոտար վայրում»³⁾: 1061 թ. մի ինչ վոր Եոնալդ վրեժ է բուժում այն բանի համար, վոր ժառանգություն չի ստացել, և ամբողջ յերկրում յերեք տարի շարունակ կողոպուտներ է անում, հրկիզումներ, ըսպանություններ և կատարում և մարդիկ բռնում⁴⁾:

11-րդ դ. հաճախակի կրկնվող սարսափելի սովի տարիները պարզապես կլիմայական պայմանների հետևանք չէյին, այլ ամենից առաջ հետևանք էյին գյուղացիների թշվառ դրության: Ֆրանսիացի տնտեսագետ Դարե դե լա Շավաննի հաշվումներով, 11-րդ դարում յեղի էն սովի քսանվից տարիներ, 12-րդ դ. — յերկու, 14-րդ դ. — չորս, իսկ 970 թ.—1040 թ. ժամանակամիջոցում — քառասունութ: Հիմք չկա տարակուսելու, ինչպես անում է Ո. Ա. Դորիաշ՝ Ռոժդեսավենսկայան, վոր իրոք 11-րդ դ. ար-

¹⁾ Gaufredus Malaterra, Historia Sicula, Muratori, 5-րդ հ.:

²⁾ Guilelmus Malmesberiensis, De rebus gestis Anglorum, R, 13-րդ հ., էջ 13:

³⁾ Luchaire, Les premiers Capétiens, էջ 81:

⁴⁾ Luchaire, հիշ. աշխ., էջ 77, 81:

հավիրքներն ավելի ուժեղ են յեղել, քան նախընթաց դարում¹⁾։ Աղբյուրներն այս մասին խոսում են շատ կոնկրետ և առանց շարժանի։ Որինակ, Վերդենյան խրոնիկան պատմում է մեզ, վոր 1082 թ. վորոշեցին նպաստ տալ առաջին հերթին սովյալների մեջ յեղած աշխատունակներին, վորպեսզի ապահովեն դաշտերի ցանումը, վորովհետև բոլորին նպաստը չէր բավականացնում²⁾։ Ռաուլ Գլաբերը պատմում է, վոր 1033 թ. յեղել են մարդասկերության և կալ ուտելու դեպքեր³⁾։ Լյուշերը միանգամայն ճիշտ է նկատում, վոր «յիթն արհավիրքներն ու դժբախտություններն այնպես ընդհանուր չլինեյին, այն ժամանակ անհասկանալի կլիներ ժողովրդի վրդովմունքը, վորի առկայության վրա չի կարելի տարակուսել⁴⁾։ Գյուղացիության անվտանգ դրության և պետության բարեկեցության սերտ կապն արդեն հասկացել էր հայանի արբանյուր Սուգերիսը, վորն իր «Լյուզովիկոսի կյանքը» դրքում գրում է. «Յերկրի անվտանգությունը կհասցնի լի ամբարների, իսկ լի ամբարները՝ պետական գանձարանի հարստությանն»⁵⁾։

3

Գյուղացիների մեջ խոր խմորում էր տիրում։ Տարածվեց մանիքեյական աղանդը, վոր այս խմորման անվերապահ նշանն է։ 1022 թ. Որլեյան քաղաքում առաջին անգամ այրեցին հերետիկոսներին։ Ռաուլ Գլաբերը պատմում է, վոր այս հերետիկոսները սովորեցնում էին՝ թե հոգն ու յերկինքը մշտապես գոյություն են ունեցել և վոր արդարությունն ու կրոնասիրությունն աստուծուց վարձատրվում են առանց հավատացյալների

1) Ռ. Ա. Գորիաշ—Ռոմիլիստիկանական, խաչակրաց արշավանքների դարաշրջանը, պ., 1918, էջ 13։

2) Chronicon Virdunense, R, 10-րդ հ., էջ 209։

3) Rad. Glaber, R, 10-րդ հ., էջ 47. Sigibertus Gemblacensis, Chronographia, R, 13-րդ հ., էջ 261։

4) Luchaire, հիշ. աշխ., էջ 30. Lampecht, հիշ. աշխ. էջ 117։

5) Suger., Vita Ludov., R, 12-րդ հ., էջ 27։

կողմից կրոնական ծեսերը կատարելու¹⁾։ Նույնպիսի հերետիկոսներ ժողովներ էյին գումարում Տուլուզի շրջակայքում²⁾։ Արդուայի ժողովում մեղադրվող հերետիկոսների համար յեպիսկոպոսի ճառը թարգմանում են տեղական լեզվով³⁾։ Շարուզի ժողովը (1028 թ.) նույնպես դործ ունի մանիքեյացիների հետ։ 1046 թ. գտնվեցին մանիքեյական աղանդին կողմնակից գյուղացիներ, վորոնք գաղտնի հավաքույթներ էյին սարքում, բացատում էյին ամուսնությունը, մսի գործածումն իրրե սնունդ և կենդանի էյակաների սպանությունը (Լյիժի յեպիսկոպոսների պատմությունը)⁴⁾։ 1114 թ. վոմն գյուղացի կլիմենտ Սուասոնի շրջակայքում մանիքեյացիների առաջնորդն էր⁵⁾։ 1115 թ. Մանս քաղաքում վոմն Հենրիխ հոգևորականության ղեմ մղած իր ագիտացիայով այնպիսի հաջողություն ունեք, վոր արդեն վոչ վոք չէր ուղում գործ ունենալ վերջինիս հետ և անհրաժեշտ մթերքներ վաճառել նրան⁶⁾։ Մանիքեյական աղանդավորների հեղափոխական բնույթը պարզորոշ արտահայտվում է նրանց ուսմունքի համառոտ շարադրանքի մեջ, վոր արված է Պետրոս Հարգարժանի մոտ. «Յեկեղեցիները ձեռնարկություններ չպիտի ունենան. առհասարակ աղոթքի համար վորոշակի տեղ պետք չէ, քանի վոր աստված, յերբ նրան են ղիմում, հավատարապես լսում է զինետանը, ինչպես յեկեղեցում, շուկայում, ինչպես տաճարում, սեղանի առջև, ինչպես և զմի. վոչ մի աղոթք, վոպրմություն ու այլ բարի գործեր հարկավոր չեն մեռած հոգիների համար⁷⁾։ Բայց միայն աղանդը չէ, վոր տարածվեց գյուղացիների մեջ։ Զարգանում էր բանդիտիզմը։ «Զբավորները կողոպուտներով ու հրկիզումներով տանջում էյին հարուստներին»,—գրում է Սիգիբերտ ժամբու-

1) Rad. Glaber, R, 10-րդ հ., էջ 35։
 2) Ademarum Cabannensis, Chronicon Aquitanicum et Francicum, R, 10-րդ հ., էջ 159։
 3) Synodus Atebatensis, R, 10-րդ հ., էջ 540. Adem. Caban. R, 10 հ., էջ 164։
 4) Gesta episc. Leod., R, 13-րդ հ., 11։
 5) Guib. Novig., R, 12-րդ հ., էջ 265։
 6) Gesta episc. Cenoman., R, 12-րդ հ., էջ 547։
 7) Petri venerabilis Epistolae, R, 15-րդ հ., էջ 63։

դաջին 1095 թվի մասին¹): Նորմանդական հերցոգ Ռիխարդ 2-րդի կառավարման ժամանակ ապստամբում են նորմանդական գյուղացիները: Նրանք ուզում էին անարգել ողտվել անտառներից ու գետերից: Յուրաքանչյուր համայնքից յերկու ներկայացուցիչ եր ընտրվում կենտրոնական ժողովին: Յերբ հերցոգն իմացավ այս մասին, նա կոմս Ռադուլֆին մեծ զորքով ուղարկեց ցրելու գյուղացիական ժողովը: Սա առանց հաղաղելու բռնեց բոլոր ընտրյալներին ու միքանի կողմնակի գյուղացիների, կրտսերաց նրանց ձեռքերն ու վռաքերը և տուն ուղարկեց, վորպեսզի մյուսների համար սովորութուն չզառնա: Այս հավաքույթից հետո ցրվեցին, և գյուղացիք վերադարձան իրենց գութանների մոտ²): Նորմանդական այս պատմության արձանագանքը պահպանվել է 12-րդ դ. յերկրորդ կեսի պոետի մոտ, վորը մեջ է բերում գյուղացիների հետևյալ խոսքերը. «Այն ժամանակ մենք կկարողանանք գնալ անտառները, փայտ կտրել և վերցնել այն, ինչ մեզ զուր է գալիս, գետերում ձուկ վորսալ... ամենուրեք մեր ուղած ձեռով անտրինել անտառները, ջրերն ու արոտները»³): 1024 թ. Բրետանում գյուղացիական ապստամբութուն եր և այստեղ ապստամբութունը ճնշվում է արյամբ, «վորովհետև նրանք գնում էին կովերու առանց ղեկավարության ու առանց պլանի»⁴):

Բայց 11-րդ դարում գյուղացիական բողոքի գերակշռող ձևը մասսայական փախուստն եր, նոր, ֆեոդալական ճնշումից ազատ հողերի վորոնումը, առանձնապես անտառներում: «Հյուրերը» տիպիկ յերևույթ են 11-րդ դ. Ֆրանսիայում: «Հյուրերն» սկսում են ընակվել անտառներում, կովում են ֆեոդալների դեմ անտառի համար և հարկ յեղած դեպքում նոր վայրերում հպտակվում տեղական իշխանին պայմանագրային հիմունքներով, վորտակի վոչ բարձր վճարով: Ֆեոդալներն աշխատանքային ուժի պակասության պատճառով սովորաբար ուրախությամբ էին ընդունում

¹) Sigib. Gemblat., R, 13-րդ հ., էջ 260:

²) Cuilelmus Gemeticensis, De gestis ducum Normannorum. R, 10-րդ հ., էջ 185:

³) Roman de Rou, 6069-րդ բանաստեղծութուն:

⁴) Vita st. Gildae, R, 9-րդ հ., էջ 377:

նում ընակչության այս աճը: Յեկեղեցին հատուկ ապաստարաններ բացեց փախստակ գյուղացիների համար և նրանց ոգնությամբ արմատահան եր անում անտառներն ու ընդարձակում իր կարվածքները: Աշխարհիկ ֆեոդալներն ստիպված էին իրենց անտառները նվիրել կամ վաճառել յեկեղեցուն այսպիսի աղաստարաններ բացելու համար, սրա դիմաց ստանալով վորոշակի յեկամուսներ: Տուրենի Մարմուտյե վանքի հրովարտակների ժողովածվում 1050 թ. տակ մենք կարդում ենք. «Հաճախակի պատերազմների հետևանքով տվյալ վայրը վերածվեց անապատի, և համարյա յոթ տարի այնտեղ վոչ վոք չեր ապրում, կամ ավելի ճիշտ, մի մարդ եր ապրում, բայց նա հողը չեր մշակում, այլ մեղր եր հավաքում և թռչուն եր վորսում և վորս անում անտառում»¹): Անժուայի Սեն-Ֆլորան դե Սոմյուրի վանքի հրովարտակների ժողովածվում 1062 թ. տակ մենք կարդում ենք. «Դառախերն ամայացված և լքված էին»²): Վանդեյայի Սեն-Մեսան վանքի հրովարտակների ժողովածվում 1059 թ. տակ ասված է. «Եթի բոլոր ընակիչները փախան, վորովհետև գյուղացիները քաշվեցին անտառները և չցանկացան վերադառնալ տեսնելով այս, արքեպիսկոպոս Արիտրալը խնդրեց (Պուատեի) կոմսին թույլ տալ նրան այս անտառում յեկեղեցի շինելու»³): 1084 թ. ֆեոդալները Լեզա արքայությանը նվիրում են մի վայր «բոլոր բնակիչներով և բոլոր նրանցով, ովքեր իրենց համար աղաստան կգտնեն հողի վրա» չորս խաչով սահմանադրված... Յեթե նվիրողների հպտակները տեղափոխվին այս վայրը, ապա նրանք յեկեղեցուն հասնող պարհակները վճարելուց հետո պիտի պատկանեն իրենց հին տերերին: Բայց յեթե ուրիշ վայրերից, ուրիշ իշխանների հպտակներ տեղափոխվին, ապա նրանք կպատկանեն արքայությանը⁴): 1096 թ. Բլուայի կոմսը հողամաս է նվիրում Մարմուտյեյի արքայությանը և խնդրում, վոր վանականներ

¹) Cartulaire de Marmoutier, տես Flach, Les origines de l'ancienne France, 1-ին հ., էջ 397:

²) Cartulaire de St. Florent de Saumur.

³) Cartulaire de St. Maixent, տես Flach, հիշ. աշխ., 2-րդ հ., էջ 143:

⁴) De Vic et Vaissette, հիշ. աշխ., էջ 358:

քնակվին այդ հողամասում: «Վորպեպի նրանք ավելի սիրո՞ւնենն այս, մենք նրանց թույլ կտանք ազատորեն ողովելու անտառից վառելիքի և շինարարության համար ինչպես իրենց, այնպես էլ յեկվորների համար, միայն այն պայմանով, վոր նրանք անտառը չվաճառեն»¹⁾: Կլյունիի վանքի հրովարտակների 1064 թ. ժողովածվում մենք կարդում ենք, վոր Կարմենդա կոչված մի վայր, վորը շրջապատված էր խիտ անտառներով, մարդիկ յեկան, բացատներ արին և իրենց համար հարմար ընակարաններ շինեցին²⁾: «Հյուրերի» համար պայմանները հենց պայմանագրային էին, և սա շատ նշանակալից փաստ և ֆեոդալական հասարակության մեջ: Սեն-Հյուզ դե Գրենորը վանքի 1090 թ. հրովարտակների ժողովածվում մենք տեսնում ենք, թե ինչպես յեպիսկոպոսը սահմանում է «հյուրերի» պարհակներն «ըստ փոխադարձ պայմանագրության»³⁾: Սեն ընգուսում և, վոր «հյուրերի» սովորության շնորհիվ դյուղական դասակարգերի շարժումությունն այնքան մեծացավ, վոր շատ սենյորներ դանվում էին իրենց հպատակներին կորցնելու սպառնալիքի տակ: Նրա տաճին առնելու միակ միջոցը ճորտերի գրության բարելավումն էր⁴⁾: 12-րդ դարի այսպես կոչված «ազատագրումը» հենց հանգում է կամայական, անորոշ պարհակները վորոշակի, մեկընդմիջտ սահմանված պարհակներով փոխարինելուն⁵⁾:

Փրանսիայի ագրարային զարգացման նորագույն հետազոտողներից մեկը՝ Բլոխը, ի վիճակի չլինելով բացատրել մշակվող հողերի թուխքածն ընդարձակման պատճառը 11 և 12-րդ դարերում, այս պատճառը վորոշում էր բնակչության թուխքածն բազմացման մեջ, այսինքն մի անբացատրելի յերևույթը փոխարինում էր մյուսով⁶⁾: Իսկ իրականում վոչ թե բնակչության բազմացման

¹⁾ Cartulaire de Marmoutier, տես Flach. հիշ. աշխ., 2-րդ հ., էջ 152:

²⁾ Cartulaire de Cluny, տես նույն տեղում, էջ 147:

³⁾ Cartulaire de St. Hugues de Grenoble, տես նույն տեղում, 1-ին հ., էջ 398:

⁴⁾ See, հիշ. աշխ., էջ 238:

⁵⁾ Költzschke, Allgemeine Wirtschaftsgeschichte, Jena, 1924, էջ 372; See, հիշ. աշխ., էջ 215:

⁶⁾ M. Bloch, Les caracteres originaux de l'histoire rurale française, Oslo—Paris, 1931, էջ 17:

մեջ պետք է վորոշել մշակվող տարածությունների ընդարձակման պատճառները, այլ դյուղացիներին փախուստի՝ իբրև դասակարգային պայքարի ձևի: Բնակչության պակասության վերաբերյալ գանդատները և հողային տարածությունների ընդարձակման պրոցեսն ընթանում են զուգահեռաբար:

4

Հողածարավ ֆեոդալները հարձակվում էին վոչ միայն իրենց հարևանների, այլև յեկեղեցական հարուստ կալվածքները վրա: Կլյունիի կազմակերպությունը պայքարում է յեկեղեցական կալվածքներն աշխարհիկ ֆեոդալների կողմից զավթելու դեմ: Որինակ 11-րդ դարի առաջին կեսում հարավային Փրանսիայի համարյա բոլոր վանքերը դարձան աշխարհիկ ֆեոդալների սովորական կալվածքներ, և միայն սկսած այս դարի կեսերից աեղի յեռնենում յեկեղեցական իրավունքների վերականգնում: Այս պայքարում կլյունիականները կարողացան սպառնալիքներին: Մասաների մեջ առանձնապես մեծ արձագանք գտավ յեկեղեցու պայքարը խաղաղություն հաստատելու համար: Մկաճ Շարուզի ժողովից (989 թ.) հարավային Փրանսիայում մշտապես փորձեր են արվում հասնելու խաղաղության, վորոնք 1041 թ. հանգեցին «աստվածային խաղաղության» հաստատման¹⁾: Յեկեղեցական ռեֆորմի հակառակորդները, ինչպես հայտնի յե, յեկեղեցուն կշտամբում էին այն բանի համար, վոր նա մասաներին ներգրավեց այս պայքարի մեջ: «Յեկեղեցական գործերի կառավարումը դու հանձնեցիր իստեֆանի կատաղությանը», գրում են գերմանական յեպիսկոպոսները Գրիգոր 7-րդին, և Միլանի պատմարան Լանդուլֆը վրդովվում է այն բանից, վոր յեկեղեցական հարցը քննարկում են անզրպեա մարդիկ և այն լուծվում է բունի ճանապարհով: Խաղաղության համար մղված այս պայքարում, վորին ներգրավված էին մասաները, կային հեղափոխական թագնված հարավորություններ: 1035 թ. կամբրեյում լուրեր են տարածվում, թե յերկնից նամակ է ընկել, վոր

¹⁾ Luchaire, հիշ. աշխ., էջ 109—121, 133—143; De Vic et Waissette, հիշ. աշխ. 7-րդ հ., էջ 134—170. R, 15-րդ հ., էջ 283, նույն տեղում, 14-րդ հ., էջ 85, 779:

րի մեջ գրված է, վոր այլևս վոչ վոք զենք չկրի, վոչ վոք հետ չպահանջի այն, ինչ իրենից խլված. այս լուրն ոգտագործում էյին տեղական յեպիսկոպոսի դեմ ագիտացիա անելու համար, վորն իբրև թե խաղաղության թշնամի յեր¹⁾:

Բայց խաղաղության տարված պայքարը քիչ հաջողություն ունեցավ: Յեկեղեցական ֆեոդալներն իհարկե չէին ցանկանում կազմակերպել մասսաների պայքարը, իսկ միջֆեոդալական յերկպառակություններն անվերացնելի դուրս յեկան: Նույնիսկ կլեր-մոնի ժողովի ժամանակ Անդուլեմի յեպիսկոպոսը ներողություն է խնդրում, վոր շրջակայքում տեղի ունեցող մշտական ազմական ընդհարումների պատճառով նա չի կարող ներկայանալ ժողովին, իսկ Որդերիկ Վիտալը մեխանիստիկ կերպով նկատում է, վոր շքանի վոր բարձրագույն արդարագատություն չկա, ապա խաղաղության վերաբերյալ ըստ վորոշումներն ել չեն ոգնում²⁾:

5

Գյուղացիների մասսայական փախուստը և անապահով խավերի առկայությունն ասպետության մեջ նոր բնույթ տվին 11-րդ դարի ուխտագնացությանը: Յեթե առաջ ուխտագնացությունն անհատական ճամբորդություն էր, ապա այժմ այն դարձավ մասսայական տարագրության մի ձև: Յեթե 10-րդ դ. մենք գիտենք վեց ուխտագնացություն զեպի Յերուսաղեմ, ապա 11-րդ դ. զբանց թիվը հասնում է մինչև 116-ի: Սրա հետ միասին կարելի չէ յենթադրել, վոր աղբյուրները հիշում են միայն այն ճամբորդությունները, վորոնք իրենց մասսայական բնույթով կամ բարձրապատիվ մարդկանց մասնակցությամբ իրենց վրա էյին գրավում ժամանակակիցների ուշադրությունը: Իհարկե, առաջ ել կրոնասիրությունը չէր միայն, վոր ուխտավորներ էր գրավում զեպի Արևելք: Հայտնի չէ, թե ինչպես նորմանները հեղ-աությամբ հրաժարվեցին ուխտագնացությունից և մնացին հա-

րավային Իտալիայում³⁾ այնտեղ կիրառում գտնելով իրենց ուժերի համար⁴⁾:

Գիլյոմ Տիրացին պատմելով Ամալթայի «հյուրանոցի» — Յերուսաղեմի այլ հյուրընկալ տան ստեղծման մասին, ասում է, վոր նա հատկացված է այնպիսի մարդկանց, վորոնք այցելում են այս քաղաքը կրոնական, առևտրական կամ այս ու այն նպատակներով⁵⁾: Ճանապարհին, իհարկե, վտանգավոր էր առանձին ուխտավորների համար, մանավանդ անղենների համար, ընդվուրում վտանգ սպառնում էր վոչ միայն մուսուլմանների, այլև բյուզանդացիների կողմից: Այսպես որինակ՝ 1018—1021 թ. թ. բյուզանդացիք շատ ուխտավորներ բռնեցին⁶⁾: Ռաուլ Գլաբերը գլուխ է կտրում այն հարցի վրա, թե ինչն էր մասսայական ուխտագնացության պատճառը և զայիս է այն յեղբակացության, վոր սա նեոսի գործ է: Բայց սրա հետ միասին նա նկատում է, վոր սկզբում գնում էյին աղքատ մարդիկ, հետո՝ միջին ստացվածքի և միայն հետո՝ հարուստներն ու թագավորներ⁷⁾: 1026 թ. նորմանդական զուքսի նյութական ոժանգակությամբ Պաղեստին մեկնեց Սեն-Վանի արքանայր Ռիշարը 700 շմարզով⁸⁾: 1035 թ. նորմանդական զուքս Ռորերա Սատանան «հակայական միջոցներով» գնում է Պաղեստին⁹⁾, իսկ 1064 թ. գերմանական յեպիսկոպոսների մի խումբ իր շուրջն է հավաքում 7 հազար, իսկ ուրիշ աղբյուրների համաձայն՝ նույնիսկ 12 հազար ուխտավոր: Նրանք Միրիայում իսկական պատերազմ են մղում բեդվինների դեմ, թեև աղբյուրները ջանում են այս պատերազմը ներկայացնել իբրև դուռ պաշտպանողական պատերազմ: Բնորոշ է, վոր յեպիստական իշխանություններն ուխտավորներին ազատել են բեդվիններից, «վորովհետև նրանք վա-

1) Rad. Glaber R, 10-րդ հ., էջ 25; Prutz, Kulturgeschichte der Kreuzzuge, Berlin, 1883, էջ 525; Gu Ielmus Godelus, Chronicon Pontiniacense, R, 13-րդ հ., էջ 262:

2) Guil. Tyrius, RC, 1-ին հ., էջ 862:

3) Adem. Caban., R, 10-րդ հ., էջ 156:

4) Rad. Glaber, R, 10-րդ հ., էջ 50:

5) Digot, Histoire de Lorraine, Nancy, 1866, էջ 241:

6) Chron. Virdunense, R, 11-րդ հ., էջ 144:

1) Gesta episc. Camerac., R, 13-րդ հ., էջ 122:

2) Epist. Ademari Engolismensis, R, 14-րդ հ., իջ 714:

խնամ էյին, վոր յեթե նրանք սպանվին, ապա այլև ուխտա-
վորներ չին պա, և սա կանգրագառնա նրանց յեկամուտների
վրա: Ինարկե, հաղթվ թե կարելի լինի յենթադրել, վոր 12 հա-
զար հոգուց կազմված զինված զորախմբերը թշնամի յեկերներով
առաջ էյին շարժվում խաղաղորեն, ինչպես գառներ¹⁾: Առաջին
խաչակրաց արշավանքի փորձը մեզ իրավունք և սալիս հակա-
ռակ յեզրակացություն անելու:

Սակայն ճորտ մասաների համար ուխտագնացությունը
մնում էր չլիուլտարված, դժվարին գործ, ուստի և անմատչելի՝
մեծամասնության համար: Պահանջվում էր ինչ-վոր սանկցիա
վերևից, վորպեսզի առվակը դառնա հեղեղատ, վորպեսզի փախ-
ստակ «հյուրերին» Ֆրանսիական անտառների խավարից նետեն
դեպի Արևելք սանոց ճանապարհները:

Լյուշերն իրավացի կերպով ուխտագնացությունն անվանում
է կանոնավոր, կազմակերպված մի հաստատություն, վոր պա-
տասխանում է վորոշակի սոցիալական պահանջմունքի²⁾: Նմա-
նապես ճիշտ և նշում Ո. Ա. Դոբբաշ-Ռոժդեսավենակայան, վոր
ուխտավորներն ստեղծեցին քաղաքական շարժման յուրատեսակ
կենտրոններ և վոր նրանք այն ժամանակվա հասարակության
ամենաշարժուն տարրն էյին: Իրեյին զարմանում է այն բանի
վրա, վոր 11-րդ դ., չնայած ճանապարհի պայմանների վատ-
թարացման, այնպես խիստ աճում է ուխտավորների քանակը, և
սա բացատրում է պաշտպանության անհրաժեշտությամբ³⁾: Նա
գտնում է, վոր մասսայական ուխտագնացությունը սովորակա-
նից տարբերվում էր միայն քանակով: Ոյորիխար գտնում է,
վոր ուխտավորների մեծամասնություն ավել և Ֆրանսիան,
վորովհետև Ֆրանսիացիք ֆանտաստիկ գաղափարներով ավելի
հեշտությամբ հափշտակվող ժողովուրդ են, քան ավելի զգաստ
գերմանացիք⁴⁾: Իսկ իրականում մասսայական ուխտագնացու-

¹⁾ Annales Altahenses, MG SS, 10-րդ հ., էջ 215; Her-
mannus Contractus, Chronicon, R, 11-րդ հ., էջ 22; Rohricht,
Pilgerfahrten in das heilige Land, 1875, էջ 327—366:

²⁾ Luchaire, հիշ. աշխ., էջ 81:

³⁾ L. Bréhier, L'Église et l'Orient au moyen âge, Paris,
1925, էջ 42:

⁴⁾ Rohricht, հիշ. աշխ., նույն տեղում:

թյունը Ֆրանսիայից հասկանալի չէ դառնում գյուղացիների
մասսայական փախուստի ֆոնի վրա միայն: Ահա այն «սոցիա-
լական պահանջը», վորին նա բավարարում էր, ահա ուխտա-
գնացության աճման պատճառը—Ֆրանսիայի ունեցած գերի
պատճառն այս շարժման մեջ:

6

Իսկ ինչձով էր վորոշվում Ուրբանոս 2-րդ պապի հոգուս խա-
չակրաց արշավանքի հանդես գալու մոմենտը: Մի շարք պատ-
մաբաններ, որինսակ, Պ. Վ. Բեզոբրազովը, գտնում էյին, վոր
վճռական փաստ էր Ալեքսեյ Կոնմինիոսի նամակը ֆլանդրիական
կոմսին, բայց պապը միանգամից չկարողացավ բավարարել բյու-
զանդացիներին ինչդրանքը, այլ ստիպված էր սպասել, «մինչև
վոր Յեզրուպայի նեղքին դործերն անցնեն յերկրորդ պլանի վրա»¹⁾:
Իսկապես Ուրբանոս 2-րդը, ընդհուպ մինչև խաչակրաց արշավանքի
հայտարարումը, անընդհատ զբաղված էր Յեզրուպայի հենց այդ
գործերով, թեև 1094 թ. նրա զբաթյունը գերմանական կայսեր
հետ պայքարելիս մի քիչ լավացավ այն կառավարչությամբ, վոր
Ադելհեյդ թագուհին դուրս յեկավ իր ամուսնու զեմ և գերմա-
նական գահաժառանգ Կոնրադն անցավ պապի կողմը: Ծիշտ և,
Ուրբանոս 2-րդը հնարավորություն ուներ գնալու հյուսիսային
Իտալիա, բայց բուն Հռոմում նա դեռևս լիակատար սեր չէր:
Ինչպես հայտնի չէ, նա նույնիսկ մեռավ մասնավոր տան մեջ²⁾:
Յեթե մենք թերթենք Ուրբանոս 2-րդի 1094 և 1095 թ. թ. հրովար-
տակներն ու նամակները, ապա կտեսնենք, վոր նա համարյա
բացառապես զբաղված է կայսեր զեմ պայքարելու և յեկեղեցա-
կան ռեֆորմներն առաջին հերթին Ֆրանսիայում կիրառելու
հարցերով: Ուրբանոս 2-րդի այս տարիներից մինչև մեր որբը
պահպանված 86 նամակներից վոչ պակաս, քան 64-ը վերաբերում
են Ֆրանսիայի յեկեղեցական ռեֆորմի հարցերին, 7-ը՝ Իտա-

¹⁾ П. В. Безобразов, Бозмунд Тарентский, ЖМНП,
1887, էջ 77:

²⁾ Meyer v. Knonau, Jahrb d. deutsch. Reiches unter
Heinrich 4, Leipzig, 1890—1909, 5 հ., էջ 329:

լիայի նույնպիսի հարցերին, 7-ը՝ Գերմանիայի, 5-ը՝ Իսպանիայի: Մաշակրաց արշավանքին վերաբերում են միայն 3 նամակ՝ հունգարական թագավոր Կոլոմանին, բյուզանդական կայսեր և Բոլոնիա քաղաքի քաղաքացիներին:

Այսպես, Ուրբանոսի յերույթը խաչակրաց արշավանքի ոգաին վոչ մի կերպ չի կարելի վերագրել այն բանին, Վոր այս տարիներին նրա ուշադրությունը գրավել է յին Արևելքի գործերը, մասնավորապես արևելյան քրիստոնյաների գրությունը կամ արևելյան յեկեղեցու իրեն յենթարկելու հարցը: Վոչ, Ուրբանոսի յերույթի համար վճռական մոմենտ էր Ֆրանսիայի խաղաղության հոգսը, յեկեղեցական կալվածքները գյուղացիական և ասպետական ասպատակություններից ազանովելու, յեկեղեցու ազդեցությունից դուրս սոցոսիոզ մասսաների վրա պահպանելու նրա հեղինակությունը, թերևս նաև գերմանական կայսեր դեմ Ֆրանսիական ոժանդակ զորախմբեր կազմակերպելու հոգսը¹: Կլերմոնի ժողովում քննություն գլխավոր առարկան խաղաղության հարցն էր: Այդտեղ շատ մանրամասն նորոգվում ու լրացվում են նախընթաց յեկեղեցական ժողովների վորոշումները: Կրկին հաստատվում է «աստվածային խաղաղություն» սկսած չորեքշաբթի յերեկոյից մինչև յերկուշաբթի առավոտ: «Աստվածային խաղաղությունը» խախտողների համար նորոգվում են յեկեղեցական պատիժների սպառնալիքները, «խաղաղության» պաշտպանության տակ են գրվում բանող անասունները, վոչ-խարները, յեկեղեցական հարկահանները, գյուղացիները և, իհարկե, քահանաները, կուսակրոններն ու ուխտավորները: Բոլոր ֆեոդալները պետք է տարեկան յերկու անգամ ներկայանան մի վորոշակի դոյակ և այնտեղ պատասխաններ տան իրենց կողմից «խաղաղությունը» խախտելու վերաբերյալ բոլոր գանդատներին²:

¹) Epist. Urbani II, Migne, P. L., 151 հ., էջ 398—547. Jaffé, Regesta pontif. Romanorum, էջ 673—701; Rohricht, Gesch. des ersten Kreuzzuges, էջ 325; Guil. Tyr., RC, 1-ին հ., էջ 40; Giesebrecht, Geschichte der deutschen Kaiserzeit, 3-րդ հ., էջ 627—673:

²) R, 14-րդ հ., էջ 391:

Ուրբանոս 2-րդի յերույթը հոգուտ խաչակրաց արշավանքի մեզ հայտնի յե չորս աղբյուրից: Բողբի Գորացին (առնասարակ մի հեղինակ, վոր հակամեա է գեղազարգելու) և Գիբերտ Նոմացին պահպանել են միայն նրա խոսքերն արևելյան քրիստոնյաների թշվառությունների վերաբերյալ: Բովանդակություններ ավելի հարուստ են Ֆուլքերի Շարարացու և Ռուբերտ Կուսակրոնի տեղեկությունները, և հենց այս աղբյուրները կատարյալ պարզությունով ցույց են տալիս, վոր խաղաղության հարցը պապի յերույթի կենտրոնական տեղն էր և խաչակրաց արշավանքի հարցն ամբողջությամբ ստորադասված էր Ֆրանսիայի ներքին գործերի հոգատարությունը: Ահա թե ինչ է ասում Ֆուլքերին. «Յերբ նա (Ուրբանոս 2-րդը: Պ. Կ.) տեսավ, վոր բոլորի՝ քահանաների ու ժողովրդի մոտ քրիստոնյական հավատքն ընկած է, և վոր յերկրի տերերը մշտապես կռվում են միմյանց հետ և միանգամայն անտեսում խաղաղությունը, գույքը խլում միմյանցից, շատերին սպորինի կերպով գերի էյին վերցնում և նետում սարսափելի բանտերը, վորտեղ նրանց տանջում էյին սովով, ծարավով ու ցրտով և նույնիսկ սպանում էյին, վոր սուրբ վաչքերը պղծվում են, վանքերն ու քաղաքները վառվում, վոչ վոքի չեն խնայում, տվեն աստվածային և մարդկային բան ծաղրի յե յենթարկվում, և յերբ նա, բացի սրանից լսեց, վոր բյուզանդական կայսրություն մեջ թյուրքերը նեղում են քրիստոնյաներին, ապա նա խղճահարվեց և նա պնաց Ֆրանսիա և գումարեց Կլերմոնի ժողովը»: Այս ժողովում Ուրբանոսն (ըստ Ֆուլքերի) ասաց. «Ասածու վորդիներ, քանի վոր գուք խոստացաք ավելի ամուր պահպանել ձեզ մոտ խաղաղությունը, քան սովորաբար, հավատարիմ պահել ու պաշտպանել յեկեղեցու իրավունքները, ապա արժեր ձեր խիզախությունը գործադրել մի ուրիշ բանի վրա յե՛ ասածու և մեր գործի վրա: Պետք է ողնություն գնալ Արևելքի ձեր յեղբայրներին, վորոնք արդեն բազմիցս ողնություն են խնդրել... Թող հեթանոսների դեմ արժանավոր ու փառավոր կռվի գուրս գան նրանք, ովքեր առաջ սովորություն ունեյին հաճախակի վնասակար պատերազմներ մղել քրիստոնյաների դեմ: Թող քրիստոսի զինվորներ գառնան նրանք, վորոնք մինչև այժմ յեղել են ավազականեր: Թող այժմ որինական կերպով բարբարոսների դեմ կռվեն նրանք, ովքեր առաջ կռվում էյին յեղբայրների ու

ազգականները դեմ: Թող հայկառենական վարձատրություն ստանան նրանք, վորոնք մինչև այժմ վարձկաններ էին միքանի գրոշով: Թող կրկնակի պատվի ձգան նրանք, ովքեր առաջ աշխատում էին ի վնաս իրենց մարմնի և իրենց հոգու: Այստեղ՝ ախարներն են և ազգասները, այնտեղ՝ աբախներն ու հարուստները: Այստեղ նրանք արող թշնամիներն են, այնտեղ՝ նրանց բարեկամները: Յեվ, ամփոփելով իր պատումը կլերմոնի ժողովի մասին, Ֆուլքերին ասում է. «Յեվ այսպես, իմաստուն ու հարգված Ուրբանոսը մի գործ սկսեց, վորն այնուհետև դարձավ փառավոր գործ: Վորովհետև նա նորոգեց խաղաղությունը, վերականգնեց յեկեղեցու նախկին իրավունքները և ջանաց խղճախորհն դուրս վտարել հեթանոսներին քրիստոնեյական յերկրներից»: Այսպիսով, ակնհայտնի չի, վոր Ֆուլքերի համար պապի յերույթի գլխավոր նշանակությունը խաղաղությունը վերականգնելու մեջ էր¹:

Թորերա Կուսակրանի պատճառից յերևում է, վոր ժամանակակիցները շատ լավ ըմբռնում էին ներքին «անարխիայի» ու խաչակրաց արշավանքի կապը, սակայն ավելի ուշ ժամանակի շահագործող դասակարգերի ջատագովները հետ նրանց միացնում է այն, վոր «անարխիայի» պատճառը նրանք վորոնում էին վոչ թե գոյություն ունեցող դասակարգային հասարակարգի, այլ գերբնակչության մեջ: Թորերաը պապի յերույթի բովանդակությունը տալիս է հետևյալ խոսքերով. «Թող ձեզ չկասեցնի վորեև ունեցվածք: Վորովհետև յերկիրը, վորտեղ դուք ապրում էք, շրջապատված է ծովերով ու լեռներով և նեղ է ձեզ համար, նա հարուստ չի և դժվարությամբ և յերկրագործներին սնունդ տալիս: Այս պատճառով դուք հարձակվում էք մեկը մյուսի վրա և կռվում միմյանց հետ և սպանում մեկը մյուսին: Թող դադարի ատելությունը ձեր միջև, թող դադարեն պատերազմները, թող հարթվեն բոլոր վեճերը: Գնացեք դեպի սուրբ դադարը, խլեք այդ հողն անաստված ժողովրդից, նվաճեք նրան՝ այն յերկիրը, վոր աստված ավել և Իսրայելի վորդիներին իբրև սեփականություն և վորտեղ, աստվածաշնչի խոսքերով, կաթ

¹) Fulcherius Carnotensis, Gesta Zrancorum, RC, 3-րդ հ., էջ 321, 323, 325:

ու մեղր և հոսում¹)»: Մյուս ազգույնները նույնպես նշում են պապի յերույթները խաղաղության հարցերի շուրջը: «Նա խրատում էր Արևմուտքի առաջնորդներին ու հպատակներին, վոր նրանք միմյանց միջև խաղաղություն պահպանեն, իրենց աջ ուսին սուրբ խաչ կարեն և գնան պատերազմելու հեթանոսների դեմ²)»:

Շատ ազնվական մարդիկ հրաժարվեցին յերկպառակիչ կոնվենտներից, վորոնցից տուժում էին Արևմուտքի և Հյուսիսի յերկրները, և շարժվեցին թյուրքերի դեմ հանուն «սուրբ վայրերի³)»: Եկկենարզը հայհոյում է նրանց, ովքեր չեն ուզում ըմբռնել, վոր խաչակրաց արշավանքը չափազանց անհրաժեշտ էր հնացող և համարյա կործանվող աշխարհի համար⁴): Գիրերա Ուրանացին գտնում է, վոր աստված «արբազան պատերազմը» նշանակել է հենց նրա համար, վորպեսզի ասպետությունն ու պարսպ թափառող ժողովուրդը, վորոնք առաջ դբաղվում էին փոխադարձ սպանությամբ, նոր ուղի գտնեն դեպի ասածու վողորմածությունը, չլքելով աշխարհիկ աշխարհը և չփոխելով իր կյանքի, հագուստի ու տրհետի (ձեռ⁵): Գրեյոմ Տիրացին խաչակրաց արշավանքից հետո յեկող մոսիկ սերունդների կարծիքն ամփոփում է այսպիսի խոսքերով. «Աշխարհը, թվում է թե, գնում է դեպի մայրամուտ, և Քրիստոսի յերկրորդ գալուստը մոտ է: Բոլոր դասերը խառնվեցին, և աշխարհը, թվում է թե, ուզում է վերադառնալ նախնադարյան քառին: Վորովհետև իշխանները, վորոնք պետք է իրենց հպատակներին ուղղեյին դեպի խաղաղության ուղին, աննշան պատճառներով կռվում էին միմյանց հետ, յերկիրը վոչնչացնելով հրդեհներով ու կողոպուտներով, իրենց անաստված ոչնականներով կողոպտելով խեղճերին: Վոչ վոք չէր կարող իր սեփականությունն անվտանգ համարել:

¹) Robertus Monachus, Hist. Hierosolymitana, RC, 3-րդ հ., էջ 727:

²) Order. Vital., R, 12-րդ հ., էջ 661:

³) Laurentius Leodiensis, Gesta episc. Virdunensium, R, 13-րդ հ., էջ 631:

⁴) Eccehardi Auragiensis Hierosolymitana, հրատ. Hagenmeyer, Tubingen, 1877, էջ 45:

⁵) Guib' Novig., RC, 4-րդ հ., էջ 471:

Յեթե վորեւ մեկի վրա կատարուած էյին հարուստ լինելու մեջ, ապա սա բավական եր իրրե պատճառ, վոր նրան բանտ նստեցնեն: Իսկ Աւրաանոսի յիւրեքը Գիւլյոմ, Տիրացին բնորոշուած է աշակես. «Այն վորոշումները հրապարակելուց հետո, վորոնք կարող էյին ուղղել բարքերը և Պետրոս Անապատականի կարծիքով վերականգնել անհայտացած խաղաղությունը... նա արտասանեց հետեյալ խրատը. «...Գնացեք, և աստված ձեզ հետ կլինի: Այն զենքը, վոր դուք արնոտեցիք յեղբայրասպանությամբ, դարձրեք հավատի ու քրիստոնէության թշնամիների զեմ¹⁾»:

Մենք այս բոլոր վկայությունները մեջ բերեցինք, վորպեսզի ցուցց տանք, վոր ժամանակակիցների հասարակական կարծիքը միանգամայն հատուկ գիտակցում էր խաչակրաց արշավանքի ու յերկրի ներքին կացության հարցերի կապը: Ազբյուրներում նմանապես բազմիցս նշվում է, վոր հենց ամենամանանգիստ տարբերն առանձին յեռանդով նեավեցին զեպի այս արշավանքը:

Արշավանքի վճիռն ընդունվեց տատանումով, առանց պատշաճ վատահուլթյան: Կլերոնի ժողովի յերկրորդ կանոնը՝ միակը 83 կանոնից, վոր վերաբերում է խաչակրաց արշավանքին, ասում է. «Ով վոր զուտ ասածուն նվիրվածությունից, վոչ թե փոստախրության կամ փողի համար գնա Յերուսաղեմ աղատելու աստու յեկեղեցին, այս ճանապարհը նրա համար կհամարվի մեղքերի կատարյալ քափում²⁾»: Անվճարականությունն ու յերկյուզը յերեւո՛ւ են նրանում, վոր պապը ջանում էր սեղական տերտերներին ձեռքը հանձնել արշավանքին մասնակցելու անհատական իրավունք տալը: «Քահանաները կամ կուսակրոնները չպեաք է գնան առանց յեպիսկոպոսի կամ արքանոր թուլյութեան: Յեպիսկոպոսները պեաք է հող տանեն, վորպեսզի ծխականներից վոչ վոք բաց չթողնվի առանց քահանայի խորհրդի ու խրատի: Հարկավոր է հող տանել, վորպեսզի յերիտասարդ ամուսնացած մարդիկ առանց իրենց կանանց հետ խորհրդակցելու չդնան»։ Ջանում էյին հետ պահել շատ աղքատ ու անվտանգ մարդկանց և, առաջին հերթին, ըստ յերեւոյթին, յեկեղեցական

1) Cuib. Pyr., RC, 1 հ., էջ 25, 40:

2) Canon, 2:

ճորտերին¹⁾: Որինակ՝ Ռեյնհարդսբուրնի տարեգիրները պատմում են, թե ինչպես մի վոմն յեպիսկոպոս հետ եր պահում արշավանքի գնալ ցանկացող մեկին, նրան նշելով, վոր նա շատ աղքատ է և արշավանքի մեջ բեռ կլինի ավելի ապահովվածների համար²⁾: Իսկապես, հեշտ բան չէր ջրարգելները բանալ մասսայական հեղեղատի համար: Պապի կողմից արշավանքին սանկցիա տալը մեծ թափ հաղորդեց շարժմանը: Այժմ արդեն վոչ վոք չէր համարձակվում հետ պահել խաչ վերցրած ճորտերին: «Հայրը չէր համարձակվում հետ պահել վորդուն, կինը՝ ամուսնուն և ճորտատերը չէր համարձակվում հետ պահել ճորտին, բոլորի համար էլ ճանապարհը բաց էր հանուն աստու³⁾»: Տուգեբոդայի այս խոսքերը պատասխանում են Ո. Ա. Գորիաշ Ռոմգեստվինսկու գրած հարցին, թե սենյոր-կալվածատերը կարող էր չթուլյատրել, թե վոչ. կալվածատերը չէր համարձակվում հետ պահել ճորտերին:

Պապի յիւրեքին նախորդեցին խորհրդակցություններ Ֆրանսիական Ֆեոդալների և Ֆրանսիական հոգևորականության վերնախավերի հետ, յերբ նա յերկարատև ճամբորդության մեջ էր գտնվում Ֆրանսիայում: Այս խորհրդակցություններում, ըստ յերեւոյթին, հաշվի յեր տունվում քարոզիչների, ինչպես Պետրոս Անապատականի, հաջողությունները մասսաների մեջ և վորոշվեց այսպիսի պիտատորներին վերջնականապես ծառայության զենել նոր գործի համար, վորն այժմ դարձել է իր հենց յեկեղեցու գործը: Իզուր չէր ժողովրդական ավանդությունը տարակուսում, վոր խաչակրաց արշավանքի նախաձեռնությունը պատկանում էր պապին: Յեթե «Մուրր Գաուֆրիդի կյանքի» հեղինակը պնդում է, վոր պապը սեփական նախաձեռնությամբ գնաց Ֆրանսիա, ապա նա բանավիճում է գերիշխող հակադիր կարծիքի հետ⁴⁾: Սխալվում է Լյուշերը, յերբ խաչակրաց արշավանքն անվանում մի գործ, վոր ստեղծել, կազմակերպել ու զեկավարել է պապությունը⁵⁾: Սխալ է Բրեյն, յերբ Ուրբանոսին վերագրում

1) Epist. Urbani II, Migne, P. L., 151 հ., էջ 483:

2) Annales Pisani, MG SS, 19-րդ հ., էջ 72:

3) Tudebodus Imitatus RC, 3-րդ հ., էջ 174 Guil. Tyr., RC, 1-ին հ., էջ 42:

4) Vita B. Gaufridi, R, 14-րդ հ., էջ 352:

5) Luchaire, հիշ. աշխ., էջ 230:

և ինչ վոր հրաշագործութուն, այն է՝ բոլորին համախմբում մի նպատակի շուրջ և հայացքների զարմանալի լայնութիւնն¹⁾։ Սխալ և Շալանդոնը, յերբ վերագրում է պապին այն յերախտիքը, վոր նա վեր բարձրացավ մասնավոր շահերից և կարողացավ պաշտպանել քրիստոնէութեան ամենաընդհանուր շահերը²⁾։ Իրականութեան ավելի մոտ է Ֆ. Ի. Ուսպենսկին, «Ասպետական զոյակներում ու գյուղերում արդեն բավական նկատելի յեր շարժումը հողուտ խաշակրաց արշավանքների, յերբ նրան անմիջականորեն մասնակցեց Ուրբանոս 2-րդ պապը՝ Նույնիսկ կարելի չէ կարծել, վոր առաջին խաշակրաց արշավանքը կիրականանար նաև առանց Կլերմոնի հռչակավոր ճառի³⁾»։ Սակայն չի կարելի թերագնահատել այն մոմենտի նշանակութիւնը, վոր յեկեղեցին սանկցիա ավելի սեղի ունեցող շարժմանը։ Այս փաստի նշանակութիւնն այն չէ, ինչ մտածում է Բեդրբրադովը⁴⁾, վոր ժողովրդին հարկավոր եր վորեև խրախուսանք վերելից, այլ այն, վոր նրա համար հարկավոր եր գնալը լեգալացներ։ Հիմք չկա Կլերմոնի ժողովում Ուրբանոս 2-րդի ճառը համարելու խրոնիկոսի ճարտասանական հնարանք, ինչպես անում է Շալանդոնը⁵⁾, ի տարբերութիւն Հագենմայերից ու Ռյորիխտից։ Բայց նույնիսկ այն դեպքում ել, յերբ այս այսպիս լինելը, ապա հարկավոր եր բացատրել, թե ինչո՞ւ խրոնիկոսների հնարանքը հենց այսպիսի ուղղութիւն ընդունեց, ինչո՞ւ եյին նրանք արշավանքը կապում ներքին խաղաղութեան հարցերի հետ⁶⁾։ Զիրեւը պապի ճառի հրակայական հաջողութիւնը բացատրում է բավական տարրերնակ կերպով նրանով, վոր «Յերուսաղեմի ազատագրման միտքը վաղուց ապրում եր մարդկանց մեջ, բայց միայն վոչ վոք ինքը չգիտեր այս մասին⁷⁾։ Միահամուռ խանդավառութիւնը, «աս-

տված է ուղում այս» բացականչութիւնը (այսինքն ուղում է այն, ինչ արդեն արվում եր, վորի մասին բոլորը գիտեցին, բայց վորը մինչև այժմ արվում եր անլեզալ, — թերևս, առանց աստծու) բացատրվում է հենց նրանով, վոր յեկեղեցու կողմից արշավանքին սանկցիա տալն ընդառաջեց մասսաների ընդհանուր ցանկութեան, դեպի նոր վայրեր շարժելու ցանկութեան։ Ծիշտ է, սրա հետ միաժամանակ մասսաների շարժումն ուղղվում եր գերիշխող դասակարգի համար ցանկալի հունով։ Ներքին խաղաղութիւնը չէր արշավանքի նախադրյալը, ինչպես հաստատում են Լյուշերն ու Գորիաշ-Ռոժգեստովենսկայան, այլ, ընդհակառակը, արշավանքին սանկցիա տալը միայն կարող եր ապահովել ներքին անդորրութիւնը։

Շատ հավանական է, վոր Ուրբանոս 2-րդը մասամբ ոգտագործել է խաշակիրներին հակապապ Կլեմենտ 2-րդի դեմ կովելու համար։ Վիլհելմ Մալմսբերացին ուղղակի գրում է. «Ուրբանոս 2-րդ պապը յեկավ Ֆրանսիա։ Նրա գալստյան պատճառը պարզ եր. Գրեբրտի կողմից Հռոմից վտարված՝ նա ուղում եր Ֆրանսիական յեկեղեցին գրավել իր կողմը։ Այս գաղտնի մտադրութիւնը հանրահայտնի չգարձավ, վորովհետև Բոնմոնդի նախաձեռնութեամբ նա ամբողջ Յեվրոպան շարժեց դեպի ասիական արշավանք և ստեղծված ընդհանուր աղմուկի մեջ հեշտ եր դաշնակիցներ ստանալ և տիրել Հռոմին¹⁾։ Սաշակիրներին ավելի լայն կերպով ոգտագործելն այս պայքարում մասսաների վրդովված լինելու պատճառով ըստ յերևույթին, անկարելի չէր։ Իզուր է Սանվինտոնը գտնում, վոր ավելի պակաս անշահասեր պապը հավատացյալների խանդավառութիւնը կոգտագործեր իր թշնամու՝ Գերմանիայի դեմ²⁾։ Այս փորձն արվեց, բայց, ըստ յերբվույթին, անհաջող։ Սաշակիրներին Կլեմենտ 3-րդի դեմ ոգտագործելու մասին խոսում է նմանապես և Ռատտ Ֆրեյզինգենացին³⁾։

1) Bréhier, հիշ. աշխ. էջ 60:
 2) Chalandon, հիշ. աշխ., էջ 15:
 3) Ֆ. Ի. Ուսպենսկի, հիշ. աշխ., էջ 11:
 4) Պ. Վ. Բեդրբրադով, հիշ. աշխ., էջ 76:
 5) Chalandon, հիշ. աշխ., էջ 38:
 6) Prutz, հիշ. աշխ., էջ 13; Rohricht, Pilgerfahrten, էջ 367:
 7) Sybel, Gesch. des ersten Kreuzzuges, Leipzig, 1841, էջ 227:

1) Guilelmus Malmesberiensis, De rebus gestis Anglorum, R, 13-րդ հ., էջ 6:
 2) Stevenson, հիշ. աշխ., էջ 94; Sigibertus Gemblacensis, R, 13-րդ հ., էջ 260:
 3) Otto Frisingensis, Chronicon, MG SS, 20-րդ հ., էջ 251; Luchaire, հիշ. աշխ., էջ 138:

Արշավանքին մասնակցող ասպետներն ամենից առաջ ասպետական չքավորության ներկայացուցիչներ էլին, Ֆեոդալական բազմազավակ ընտանիքների կրտսեր վորդիները, ավելի ուժեղ զբաղիների դեմ կռվելիս հաջողութուն ունեցող մարդիկ և այլն: Առաջ էլ ուխտագնացներն այսպիսի մարդիկ էլին: Որինակ՝ Որդերիկ Վիտալը պատմում է նորմանդական մի կոմսուհու մասին, վորն իր ամուսնու մահվանից հետո ամուսնացավ վսչ հարուստ ասպետի հետ, և նրանք յերկուսով էլ մեկնեցին Յերուսաղեմ¹⁾: Ֆրանսիական 12-րդ դ. «Յերուսաղեմի պատմության» մեջ պահպանված է հետևյալ բնորոշ պատմումը կլերմոնի ժողովի մասին: Պատն իր առջև նկատեց յերկու նստած կոմսերի և հարցրեց նրանց, թե ինչու նրանք խաչ չեն վերցնում: Կոմս դե Պերշը պատասխանեց. «Յես խաչ կվերցնեմ միայն այն դեպքում, յեթե Ռոբերտ դե Բելեմը, վոր նստած է իմ կողքին, նույնպես խաչ վերցնի, վորովհետև նա ուզում է խլել իմ հողը: «Ռոբերտ դե Բելեմը հայտնեց, վոր նա խաչ կվերցնի: Բայց նորմանդական դուքսը պապին ասաց՝ «խաչ մի տվեք նրան, վորովհետև յես նրան կըարձնեմ իմ յերկրի պահպանողը, վորի դեմ անգլիական և ֆրանսիական թագավորները չար դիտավորություններ ունեն»: Նրանք խաղաղություն կնքեցին յոթ տարով, և կոմս դե Պերշը խաչ վերցրեց²⁾: Պակաս բնորոշ է Որդերիկ Վիտալի պատմածը: Մենի կոմս Ելին, վոր կռվի մեջ էր Վիլհելմ Նվաճողի հետ, վերջինիս հայտնում է. «,Իբրև ձեր հպատակը, ձեր բարեկամությունն եմ խնդրում, ուզում եմ ձանապարհ գնալ ձեզ հետ հաշտված», Յեվ թագավորը նրան պատասխանեց. «Գնա ուր ուզում ես, բայց Մանս քաղաքը և կոմսությունը թող ինձ»: Ելին սրան պատասխանեց. «Յես ուզում եմ ինձ հեթանոսների դեմ կռվել, բայց յես Քրիստոսի ավելի մոտիկ թշնամի դառ. մեր փրկչի խաչը, վոր յես իբրև ուխտավոր, վերցրի ինձ վրա, չեմ հանի, այլ ընդհակառակը, յես այն կամրացնեմ իմ վահանին, սաղավարտին, իմ ամբողջ զենքին, իմ թամբին ու սանձին: Այսպես յես հանդես

1) Order, Vital., R, 12-րդ հ., էջ 609:

2) Li estoire de Ierusalem, RC, 5-րդ հ., էջ 627:

կգամ խաղաղության ու արդարության թշնամիների դեմ և կրուվով կպաշտպանեմ քրիստոնեյական յերկիրը: Յեվ այսպես, իմ ձին ու իմ զենքը կկրեն այս սուրբ նշանը, և ով հանդես գա իմ դեմ, կկռվի Քրիստոսի դիմադրի դեմ»: Սրան Վիլհելմ Նվաճողը սառնասրտորեն հայտնեց, «Ուր ուզում ես գնա և ինչ ուզում ես արա, յես չեմ ուզում կռվել խաչակիրների դեմ, բայց Մանսը տուր ինձ»³⁾: Բնորոշ է նաև հետևյալ որինակը, յերբ Պյուրի յեպիսկոպոս Պոնտիոս Մավրիցիոսը չի կարողանում այլևս դիմանալ իր հակառակորդներին, նա մի կերպ «համաձայնության է գալիս նրանց հետ և մեկնում Յերուսաղեմ»⁴⁾:

Մեկնողները վաճառում են կամ գրավ են դնում իրենց ունեցվածքը, վորպեսզի սրանով անհրաժեշտ միջոցներ ապահովեն արշավանքի համար: Այսպես որինակ՝ դե Ֆե սենյորները Սեն-Շաֆֆր վանքին վաճառեցին իրենց կալվածքները. մի ամբողջ շարք պրովանսացի սենյորներ նույն կերպ վարվեցին⁵⁾: Ֆրանսիական թագավորը խաչակրաց արշավանքն ոգտագործեց նոր հողեր ձեռք բերելու համար, ինչպես որինակ, Բուլթ կոմսությունը: Ստեղծված դրությունն առանձնապես մեծ մասշտաբով ոգտագործեցին յեկեղեցական ֆեոդալները, վորոնք այս շրջանում փաստորեն վերացրին այն կանոնը, վորի համաձայն պահանջվում էր սենյորի թույլտվությունը հողը վորևե կերպ հողուտ յեկեղեցու ստարացնելու համար⁶⁾: Այս առնչությամբ ընկնում էլին հողամասերի գները. որինակ, Դելիլի ավյաներով, Նորմանդիայում մի ակրի գինը 2—2½ լիվրից ընկավ մինչև 1—1½ լիվր: Արշավանք գնացողներից վոմանք իրենց միջոցներ մատակարարում էին՝ կողոպտելով իրենց հպատակներին: Որինակ, Յիմմերնի կոմսերը (նրանք յոթ յեղբայր էլին) «առանց իրենց հոր և իրենց յեղբայրների գիտության կողոպտում էլին հպատակներին, առանձնապես Ռուլինդհոֆֆեն գյուղում, այնպես վոր նրանց գնալուց հետո գյուղում մեծ լաց ու կոծ էր տիրում...

1) Order. Vital., R, 12-րդ հ., էջ 670:

2) De Vic et Vaissette, հիշ. աշխ., 5-րդ հ., էջ 26:

3) Նույն տեղում, 5-րդ հ., էջ 397: 7-րդ հ., էջ 149:

4) Grandes chroniques de France, R, 12-րդ հ., էջ 134: Chalandon, հիշ. աշխ., էջ 55:

ընդվորում կողոպուտին մասնակցում էին նրանց ուղեկիցները ամբողջ յեռանգով նվիրվելով այս գործին¹⁾։

Գնացած ասպետների հոգսերից մեկն էր տանը թողնված ունեցվածքի պահպանումը։ Նրանք վրդովվում էին նրանց դեմ, ովքեր խաչ վերցնելով իրենց վրա, հետաձգում էին գնալը և իրենց դիրքն ոգտագործում գնացածների հաշվին հարստանալու համար։ Այսպես, պատրիարք Սիմեոնը գրում է տանը հետեյալը. «Դուք գիտեք, վոր բանադրման են յենթակա բոլոր նրանք, ովքեր խաչ են վերցրել և մնացել տանը»²⁾։ 1098 թ. ամառը Աեսելմ Ռիբեմոնացին գրում է տուն. «Մնգրում ենք ձեզ պաշտպանել մեր հողը։ Պաշտպանել խեղձերին բռնակալների դեմ, միջոցներ ձեռք առնել կեղծ ուխտագնացների դեմ, ստիպել նրանց կրկին խաչ վերցնելու և զիմելու արշավանքի, կամ թե չե բանադրել նրանց»³⁾։ Իսկ նույն տարվա սեպտեմբերին խաչակիրների առաջնորդները շատ թախանձագին խնդրանքով դիմում են Պապին⁴⁾։

Բյուզանդացիք, վոր վարժվել էին գործ ունենալ արևմտա-երոպական վարձկանների հետ, ասպետ-խաչակիրների վրա նա-յում էին ուղղակի իբրև վարձկան զորքի նոր կոնտինգենտի։ Բայց միաժամանակ նրանք արշավանքի առաջնորդների նպա-տակներին վերաբերվում էին մեծ անվստահությամբ, տարա-կուսելով, վոր նրանք մատգրություն կունենան նոր կալվածքներ նվաճելու ի հաշիվ Բյուզանդիայի։ «Յուրաքանչյուր ֆրանսիացի ձգտում էր մյուսից առաջ անցնել... Լատին ժողովուրդը փող շատ է սիրում, բայց յերբ բանը վերաբերում է հող նվաճելուն, ապա նա կորցնում է իր բանակախոթյունը և անզուսպ է»։ Այսպես և բնորոշում խաչակիրներին Աննա Կոմինան, նրանց սովորեց-նելով Հյուզո վերամանդուլայի բերանով արտասանված հետեյալ խոսքերով. «Դուք պետք է մնայիք տանը և ձևնպահ մնայիք ուրիշի ունեցվածքից։ Բայց քանի վոր դուք արդեն այստեղ եք

յեկել, ապա դուք կարիք ունեք կայսեր բարեհաճության, և յե-թե դուք նրան չլսեք, ապա ձեր բանը վատ կլինի»¹⁾։

Գերմանիայի հակապապական շրջաններում ֆեոդալները շա-հագրողված էին, վորպեսզի մարտունակ մարզկանց հետ պա-հեն հայրենիքում և նրանց ուղղին պապի կողմնակիցների դեմ։ Ուստի, Եկկհարդի խոսքերով «այս փողն այնտեղ ավելի պա-կաս էր հնչում»։ Սակայն այն շրջաններից, վորոնք գտնվում էին պապի կողմնակիցների իշխանության ներքո—Կոնստանցի, Զայցբուրգի և Նասսաուսի յեպիսկոպոսների շրջանից—բավականա-նաչափ ջոկատներ միացան արշավանքին²⁾։

Մաշակրաց արշավանքին առաջնորդներ էին պետք նրանք գտնվեցին հանձին այն խոշոր ֆեոդալների, վորոնք կապ-ված էին Կլյունիական շարժման հետ և մասամբ էլ միմյանց հետ ազգակցական կապերով, վորոնք արշավանքին մասնակցելու մեջ միջոց էին նկատում հայրենիքում զժվարին զրությունից զուրս գալու համար։ Այս անհաջողակ թագավորներից յուրա-քանչյուրն իր առանձին պատճառն ուներ առմիշտ կամ ժամա-նակավորապես իր հայրենիքը թողնելու համար։ Գննենք զբան-ցից յուրաքանչյուրին առանձին։

Գոտֆրիդ Բուլոնացին աննշան կոմսի զավակ, իր մայր Իվայից, վոր Գոտֆրիդ Մորուքավորի դուստրն էր, Գոտֆրիդ Կուզի մանվանից հետո ժառանգեց Ներքին Լոթարինդյան զբը-սությունը (1076 թ.), բայց Հենրիկոս 4-րդ կայսրը չհաստատեց այդ ժառանգությունը։ Նա կայսեր կողմնակիցն էր, մասնակցել էր հակաթագավորականների դեմ մղված կռիվն ու զերմանական ասպետների կողմից Հռոմի զրավմանը և 1089 թ. հաստատվել իբրև դուքս։ Գոտֆրիդ Բուլոնացին մշտական և սակավ հաջողակ կռիվ մեջ էր իր զրացիների՝ Վերդենի յեպիսկոպոսի հետ, վոր Նամյուրի կոմսերի կողմն էր բռնել նրա դեմ սուրբ Գուբերտ վան-քի հարցում, ընդվորում նա, կայսեր կողմնակից լինելով, ան-սկզբունք կերպով աջակցում էր պապի կողմնակից սուրբ Գուբեր-տի վանքի արբահորը։ Նրա զոյակ Բուլյոնը գտնվում էր ռազ-մազորական կարևորագույն կետում, Լոթարինդիայի և բուն Գեր-մանիայի սանձանագլխին։ Դոյակի շրջակայքը հարուստ էր ա-

¹⁾ Zimmerer, Chronik, հրատ., Hagenmeyer, Archive de l'Orient latin, 3-րդ հ., 1884, էջ 24, 32։

²⁾ Epist. sim. patr., տես Hagenmeyer, Kreuzzugsbriefe, էջ 141։

³⁾ Epist. Anselmi Ribem., նույն տեղում, էջ 160։

⁴⁾ Epist. princ., նույն տեղում, էջ 165։

¹⁾ Anna Comnena, Alexias, RC grees, 1-ին հ., էջ 6, 8, 24։

²⁾ Zimmerer, Chronik, էջ 63, 66։

րոսներով ու անտառներով: Զարմանալի չե, վոր նրա շուրջը կրքեր յեռացին: Միայն 1082 թ. Գոտֆրիդը կարողացավ Նամ-յուրի կոմսից հեռ ստանալ իր զոյակը Լիեժի յեպիսկոպոսի ոգ-նությամբ, վորը Գոտֆրիդ Մորուքավորի մահվանից հետո ան-ցավ նրա կողմը: Գոտֆրիդ Բուլյոնացին իսկական ավագակ-աս-պետ եր. Լավրենտիոս Լիեժացու տեղեկություններով նա «հրով ու սրով մոլեգնում եր մերոնց դեմ»¹⁾: Բուլյոն զոյակը, Եգիզիոս Որվալացու ասելով շատ մոտ եր գտնվում Լիեժի յեպիսկոպոսի կալվածքներին, վորոնց ամայացնում եր Գոտֆրիդը. այնպես վոր յեպիսկոպոսն ամեն կերպ ջանում եր ձեռք բերել այս զոյակը, վորպեսզի խաղաղությունն ապահովի վոչ միայն իր, այլև իր բոլոր զորացիների համար²⁾: Սաչակրաց արշավանքի գնալով, Գոտֆրիդն այս զոյակը և իր մնացած կարողությունը վաճառեց Լիեժի յեպիսկոպոսին յերեք հազար արծաթե մարկով, իսկ Մոսե, Ստենե և Ֆալկենշտայն կալվածքները՝ Վերդենի յեպիսկոպոսին: Նա ուրախությամբ կառչեց Արևելքում բախտ վորոնելու հնա-բավորությանը, իր հետ վերցնելով իր յեղբայրներ Բալդուինին ու Յեվստաքիոսին և ստացած փողով հավաքագրելով զինված մարդիկ: «Նա ամեն տեսակ միջոցներ եր վորոնում, վորպեսզի փող գտնի զինվորական մարդիկ հավաքագրելու համար... Նրա վորոշմանը քիչ չնպաստեցին մեծ արյունահեղությունն ու մըշ-տական պատերազմները, վոր այն ժամանակ կային կայսեր և գերմանական իշխանների միջև»³⁾: Գոտֆրիդն ոգտագործեց այն ժամանակ տարածված լուրերը, թե առաջիկայում հրեյական ջարդեր են լինելու, վորպեսզի Մայնցի ու Քյոլնի հրեյաներից խոշոր գումարներ ստանա իբրև թե նրանց պաշտպանության համար: Աննա Կոմնինան ասում ե, թե Գոտֆրիդն ընկճված եր, քանի վոր նա, կալվածքներ չունենալով, թողեց հայրենիքը⁴⁾:

¹⁾ Laurentus Leod., R, 13-րդ հ., էջ 628:

²⁾ Aegidius Aureaevallensis, Gesta pont. Leod., R, 13-րդ հ., էջ 606: Triumphus St. Lamberti, MG SS, 20-րդ հ., էջ 499: Albericus mon. Trium. Fontium, Chronicon, R, 13-րդ հ., էջ 688:

³⁾ Zimmerer, Chronik, էջ 21; Order. Vital., R, 12-րդ, էջ 666:

⁴⁾ Anna Comnena, Alexias, էջ 34: Röhricht, հիշ. աշխ., էջ 59:

Գոտֆրիդի յեղբայր Յեվստաքիոսը վորպես Ռոբերտ Նորման-դացու կողմնակից մասնակցեց նրա հոր՝ Վիլհելմ Նվաճողի դեմ սկսված ապստամբությանը: Գոտֆրիդի քեռի Գոտֆրիդ Կուզն ամուսնացած եր պապի հայտնի կողմնակից Մաթիլդ Տոկանա-ցու հետ:

Ռայմունդ Տուլուզացին անվանապես իշխում եր Ֆրանսիա-յի տերրիտորիայի ամենից ուժեղ պետություններից մեկում: Բայց իրականում նա միանգամայն անզոր եր իր հզոր վասալ-ներին, առանձնապես յեկեղեցական վասսալների մեջ: Նա Տուլուզի կոմս Պոնսի յերկրորդ վորդին եր, և նրա մահվանից հետո (1061 թ.) նրա ավագ վորդի Գեյլում 4-րդը ժառանգեց հայրական կալ-վածքները: Գրիգոր 7-րդ պապը Ֆիլհելմ Բուրբուսնդացուն գրած իր հայտնի նամակում (1074 թ.) հիշատակում ե Ռայմունդի մա-սին, իբրև յեկեղեցուն առանձնապես հաժաարիմ մարդու, վորն ինչ-վոր խոստում ե ավել «ղեպի նա բարձրացրած ձեռքերով» պաշտպանելու սուրբ Պետրոսի գահը¹⁾: Ռայմունդն ամուսնացավ Պրովանսի կոմսի ժառանգուհի՝ իր մորաքրոջ աղջկա հետ, վորի հա-մար յեկեղեցու կողմից բանադրվեց: Միայն 1079 թ. նրա ավագ յեղ-բայրը նրանավեց հայրական կալվածքների մի մասը և 1088 թ. նրան նշանակեց իր ժառանգորդը: Մինչ այս նա համարվում եր «տանց հայրական վորևե ժառանգության»²⁾: 1080 թ. Ռայմունդը յեր-կրորդ անգամ ամուսնացավ Ռոմեր 1-ին Սիցիլիացու աղջկա հետ և 1091 թ. իսպանական արաբների դեմ արշավելու կապակցու-թյամբ յերրորդ անգամ ամուսնացավ Ելլիբա Կատտիլացու հետ: Այս ամուսնությունները բացահայտորեն հեռապնդում եյին նոր կալվածքներ ձեռք բերելու կամ գեթ այսպես ձևացնելու նպա-տակ: 90-ական թվականներին Հարավային Ֆրանսիայում լրիվ ընթացքով տեղի յե ունենում յեկեղեցական ոտարացված կալ-վածքների վերականգման և յեկեղեցական սեֆորմի կիրառման պրոցես, վորի կենտրոններն եյին՝ Մուսասակ, Լեզա և Սեն-ժիլ ար-բայությունները³⁾: Ռայմունդի գլխավոր հակառակորդն եր Պուա-

¹⁾ Epist. Gregorii 7, Migne, P. L., 148 հ.:

²⁾ Vita St. Roberti abb. Casae Dei, R, 14-րդ հ., էջ 69: Hagenmeyer, Gesta, էջ 131:

³⁾ De Vjc et Vaissette, 3-րդ հ., էջ 450, 465, 477, 478; 5-րդ հ., էջ 257, 273, 298, 359, 366, 372, 382, 384—386, 389, 392—395, 397:

տեի կոմս Գիլյոմ Գ-րդը՝ նրա քրոջ ազնկա ամուսինը: Ըստ յերևույթի, Գիլյոմը կապված էր Ռայմունդի վաստայների հետ և դիմամբը խուսափեց խաչակրաց արշավանքին մասնակցելուց: 1098 թ., Ռայմունդի բացակայութան ժամանակ նա գրավեց Տուլուզ քաղաքը, սրա համար հարսկորեն ոգտագործելով Մեն-Մերենյի յեկեղեցու կանոնիկոսների և Ռայմունդի վորդու կոն-ֆլիկաը: Ռայմունդին հովասարիմ Կագորի յեպիսկոպոսը չկարողացավ զիմադրութուն ցույց տալ, վորովհետև իր վաստայները լքեցին նրան: Յերբ ավելի ուշ (1100 թ.) Գիլյոմ Պուատեմպային ինքը ձեռնարկեց խաչակրաց արշավանքի, նա Տուլուզի կոմսութունը փողով գրավ զրեց Ռայմունդի նույն վորդու մոտ, վորից նա գրավել էր: Ռայմունդը՝ գնալուց առաջ, ըստ յերևույթի, վանասեց Կագորը և Ռոդեն¹⁾: Ավանդութուններ գոյութուն ունեցին, թե Ռայմունդն արդեն ավելի առաջ Պաղեստինումն էր և իբրև թե թուրքերի հետ ընդհարվելիս այնտեղ կորցրեց իր աչքը: Այն փաստից, վոր նրա վորդի Բերտրանը բանադրված էր յեկեղեցու կողմից Մեն-ժիլի արքայութունը կողոպտելու համար, վորը վայելում էր Ռայմունդի հատուկ բարեհաճութունը, կարելի չէ յեղրակացնել, վոր անորմալ հարաբերութուններ գոյութուն ունեցին հոր և վորդու միջև: Հաշվի առնելով, վոր Հարավային Թրանսիայում յեղև էլին խաչ վերցնելու զեպքեր մինչև պապի յերույթը (Փուլայի կոմս Ռոմերը 1095 թ. ապրիլին), նկատի ունենալով և հաշվի առնելով այն շտապողականութունը, վորով Ռայմունդն ինքը վորոշեց գնալ արշավանքի, կարելի չէ յին-թանգրել, վոր Ռայմունդը Կերմոնի ժողովից շատ առաջ արդեն նվիրված էր խաչակրաց արշավանքի պլաններին և վոր Գիլյոմ Պալմարերացու այն տեղեկութունը, թե Ռայմունդն ու Կագորի յեպիսկոպոսը խրախուսում էլին Ուրբանոսին իր մտադրութունների մեջ, զուրկ չի հիմքից: Ռայմունդն արշավանքի մյուս առաջնորդների համեմատությամբ հարուստ էր: Նրա գլխավոր նպատակն էր ապահովել Տուլուզի պետութան ամբողջութունը Պրովանսի ասպետների ամենամահաճիստ մասը հեռացնելու և յեկեղեցու հետ սերտ դաշինք կնքելու միջոցով:

1) Նույն տեղում, 5 հ., էջ 399; Order. Vital., R, 12-րդ հ., էջ 677; Guil. Neubrig., Hist. Anglic., R, 13-րդ հ., էջ 105:
 2) Տես Migne, P, L., 163 հ., էջ 123:

Վիլհելմ Նվաճողի ավագ վորդի Ռոբերտ Նորմանդացին հոր կենդանութան ժամանակ համարյա վոչ մի կալվածք չստացավ, վորին նա շատ էր ձգտում: Ռոբերտի վրասալը հետևյալ խոսքերն և գնում նրա բերանը. «Յես ի՞նչ անեմ և ի՞նչ տամ իմ զրուծինս վորոններին: Յես չեմ ուզում մշտապես քո վարձկանը լինել, ուզում եմ ինձ համար մի բան ունենալ, վորպեսզի ըստ արժանույն վճարեմ նրանց, ովքեր ծառայում են ինձ: Յես հաստատապես վորոշել եմ և ուզում եմ, վոր բոլորն իմանան, վոր Նորմանդիայում յես այլևս վոչ վորքի չեմ ծառայելու, իբրև առելի ստրուկ: Յես կշանամ ծառայել արտասահմանում, թեև այնտեղ յես կնվաճեմ այն զիրքը, վոր ինձ խոյտառակ կերպով մերժում են իմ հայրենիքում¹⁾: Ժերբերուս զգյակում նա հովաքից շարքային ասպետներին և նրանց շատ ավելի խոստացավ, քան նա կարող էր տալ²⁾: Թրանսիական Փիլիպ 1-ին թագավորի աջակցությամբ Ռոբերտն ապստամբութուն և բարձրացնում հոր դեմ: Հոր մահվանից հետո (1087 թ.) նա ստանում է Նորմանդական դքսութունը, բայց անմիջապես կովի մեջ և մահում իր կրտսեր յեղբայր Վիլհելմ Շեկի հետ՝ անգլիական գահի համար: Հենց 1094 թ. Փիլիպ 1-ինը լքում է նրան, և Ռոբերտ Նորմանդացին ըստիաված և լինում գնալու խաչակրաց արշավանքի, «վախենալով, վոր ավելի վատթար կլինի»³⁾: Նորմանդիան նա հինգ տարով գրավ զրեց անգլիական թագավորի մոտ 10 հազար մարկով: Նրա զրացի Անժուի կոմսն ոգտագործեց նրա բացակայութունը Նորմանդիայի վրա հարձակվելու համար: Իր կնոջից, վոր Ապուլիի ֆեոդալի աղջիկն էր, իբրև ոժիտ ստացած փողը Ռոբերտը վաստեց⁴⁾: Նա իբրև թե հրաժարվեց Յերուսաղեմի թագավորի պաշտոնից, հուսալով տիրանալ անգլիական գահին, բայց Տինչբրիջի ճակատամարտում (1106 թ.) անգլիական թագավոր Հենրիկոս 1-ինը ջարդեց նրան և նա իր կյանքն ավարտեց բանտի մեջ Անգլիայում՝ զբրկված յերկու գահից ել—Յերուսաղեմի, վոր նա մերժել էր, և Անգլիայի, վորին նա ձգտում էր»⁴⁾: Ռոբերտի

1) Order. Vital., R, 12-րդ հ., էջ 601:
 2) Նույն տեղում, էջ 663:
 3) Guil. Malmesb., R, 13-րդ հ., էջ 8:
 4) Gervasius Tilberiensis, Otia imperialia, R, 14-րդ հ.

քրոջ ամուսինը Ստեֆան Բլուացին եր՝ խաչակրաց արշավանքի ակնաւոր մասնակից, վորի մասին կխոսենք ստորև:

Ռորերա Ֆլանդրացին կողոպտել պատերազմ եր վարում կամբըբեյի յեպիսկոպոսի դեմ: Ենա յերկիրն այնպես կողոպտեց, վոր նա մնաց առանց հողագործների և այնտեղ չկային յեղներ, կովեր ու այլ անասուններ. իսկ տղամարդիկ ու կանայք, մեծերն ու յերեխաները փախչում էին և վողորմութուն խնդրում ուրիշ յերկրներում²⁾: Նրա դեմ դավադրութուններ էին կազմակերպւ-վում: Նրա հայր Ռորերա Ֆրիզը, ինչպես հայտնի յե, արդեն 80-ական թվականներին Պաղեստինումն եր և ծառայում եր բյուզանդական կայսեր: Վերջինս հատկապես Ֆլանդրիայից եր վարձ-կաններ սպասում: Այսպիսով, Արևելք արշավելու միաքը նոր չեք այս ընտանիքում:

Ստեֆան Բլուացին հարուստ իշխան եր. նրա մասին ասում էին, թե նա այնքան զոյակներ ունի, վորքան որ կա տարվա մեջ: Բայց նա ուներ չորս վորդի, և նրա նամակն ուղղված կը-նոջը, վոր մենք մեջ ենք բերում ստորև (եջ 59), ցույց է տալիս թե, ինչպես եր նա հող տանում իր գավաղների ազանովման հա-մար: Բացի սրանից, Բուալի կոմսերի դեմ ստեղծվեց շատ վը-տանդավոր միութուն՝ կազմված Անգլիայի ու Ֆրանսիայի թա-գավորներից և Ֆլանդրիական կոմսերից:

Այն ժամանակ, յերբ շարքային սապետների ու գյուղացի-ների՝ խաչակրաց արշավանքին մասնակցելու անտեսական-քա-զաքական շարժառիթները միանգամայն գիտակցել էին ավելի խորաթափանց ժամանակակիցները, առաջնորդների մասնակցու-թյան շարժառիթներն առաջին հայացքից ավելի քիչ էին պարզ, և նրանց մասնակցութունը բացատրվում եր միամտորեն. «Չի կարելի հավատար, վոր միանգամայն ապահովված մարդիկ առանց աստծու ազդեցության գնային Արևելք՝ պատերազմե-լու»²⁾: Իսկապես ֆեոդալական սենյորներին Արևելք տարան

¹⁾ Chronique de Cambrai, R, 13-րդ հ., եջ 487; Hariulfus, R, 12-րդ հ., եջ 58; Order. Vital., R, 12-րդ հ., եջ 605; Flach, հիշ. աշխ., 3-րդ հ., եջ 522:

²⁾ Baldricus Dolensis, Hist. Hierosolymitana, RC, 4-րդ հ., եջ 9:

իրենց կալվածքները հաստատուն ու ապահով դարձնելու, նրան-ցում խաղաղութունն ամրացնելու ձգտումը կամ հայրենիքում խճճված հանգամանքները: Կարելի յեր առարկել, վոր արշավանքի մեջ չմտած մյուս ֆեոդալների մոտ կային նույնպիսի դժվարու-թյուններ, պատերազմներ, վատ հարևաններ և այլն, բայց կոն-կրեա վերլուծութունը ցույց է տալիս, վոր հենց առաջին խա-չակրաց արշավանքի մոմենտին արշավանքի գնացած ֆեոդալ-ների զրութունն ու հեռանկարներն առանձնապես վատ էին:

Հարավային Իտալիայի զրության վերլուծութունը դուրս է ավյալ հողվածի շրջանակներից: Ուստի սահմանափակվենք հետևյալ ղիտողութուններով. հարավային Իտալիական նորման-ների մասնակցութունը խաչակրաց արշավանքին մասսայական քնույթ չի կրում, այլ բացառապես հանդիսանում է սապետների մի փոքրիկ խմբի (500 հողի) գործ՝ Բոհեմունդի ու Տանկեդի գլխավորությամբ, Բոհեմունդը թեև Ռորերա Գլխակարի ավագ վորդին եր, հեռացվեց գահաժառանգութունից հողուտ իր կըրտ-սեր յեղբոր Ռոժեր Բորսի՝ իր հոր յերկրորդ, լանգորարդի կնոջ ազդեցությամբ: Մինչև 1089 թիվը նա կովում եր յեղբոր դեմ, քայց այնուհետև պապի միջնորդությամբ հաշտվեց նրա հետ: 1092 թ. Որիա քաղաքի պաշարման ժամանակ Բոհեմունդը կորց-րեց իր ուղղակիան ուժերի մեծ մասը: 1096 թ. նա ողնեց իր քեղբորը նորմանների դեմ ապտամբած Ամուլթա քաղաքի պա-շարման ժամանակ: Բայց հանկարծ նա գազարեցքեց պաշարումը և իր սապետների հետ միասին անցավ խաչակրաց արշավանքի, այնպես վոր նրա յեղբայրը մնաց մենակ և վերադարձավ Սիցի-լիա՝ «տխրելով, վոր կորցրել և իր մարդկանց»: Սա մեղ դրուում է մտածելու, վոր ամալթացիք առևտրական կայուն կապեր ունե-նալով Սիրիայի հետ և մեծ միջոցներ, աջակցում էին Բոհեմուն-դի այսպիսի դարձին¹⁾: Բացի սրանից, ըստ յերեալթին նշանա-կութունն ուներ Ապուլիայով անցնող խաչակիթների ուժերն իրեն միացնելու հնարավորութունը: Ենա (Բոհեմունդը.—Պ. Կ.) լսել եր, վոր հսկայական քանակությամբ քրիստոնյաներ են յե-կել Ֆրանսիայից և ուղում են դնալ տիրոջ գերեզմանը և կովել հեթանոսների դեմ: Այն ժամանակ նա սկսեց յեռանդուն կերպով

¹⁾ Luchaire, հիշ. աշխ., եջ 89; Gesta, եջ 1233:

տեղեկանալ, թե ինչ գենք ունեն այդ մարզիկ, Քրիստոսի ինչ նշան են կրում նրանք և սաղմական ինչ կանչ ունեն: Նրան պատասխանեցին. Նրանք կրում են պատերազմի համար միանգամայն պիտանի գենք, աջ ուսի կամ կրծքի վրա նրանք կրում են Քրիստոսի խաչը, իսկ նրանց կանչն է՝ «Ատաված այս է ուզում» («Cesta»)¹⁾: Մալտերրան ուղղակի գրում է. «Նա (Բոնեմունդը:—Պ. Կ.) տեսավ, թե ինչպես մի մեծ մասսա, բայց առանց առաջնորդի, շարժվեց Ադուլիայի վրայով, և նա ուզեց դառնալ այս գործի առաջնորդը»²⁾: Վոր կրոնական շարժառիթներն այստեղ վոչ մի դեր չունեցին, յերևում և արդեն նրանից, վոր Ամալթան պաշարած դորքի մեջ կային մեծ քանակությամբ արարներ:

Ռադուլֆ Կանոնացին շատ միամտորեն և միտամանակ հաջող վերլուծում և իր հերոս Տանկրեդի հոգեբանությունը. «Նրա հոգին ծվատում է ինչ այն սարակույսները, թե սուպետության որենքները հակասում են ասածու որենքներին: Ատաված պատվիրել է, վոր յեթե խփեն քո մի այլին, մտտեցնես մյուսը: Իսկ աշխարհիկ սուպետությունը չի խնայում նույնիսկ հարազատ արյունը: Ատավածը պատվիրում և շապիկը տալ նրան, ով վոր հանի քո վերնագրեսար: Ասուպետությունը պատվիրում է խլել ամեն ինչ... Բայց յերբ Ուրբանոս պապը խոստացավ թողություն տալ բոլոր այն քրիստոնյաների մեղքերին, ովքեր կղնան պատերազմելու հեթանոսների դեմ, այն ժամանակ այս հերոսի մեջ արթնացավ մինչ այդ քնած խիղախությունը»: Վոչ միայն բյուզանդացիք, այլև արևմտայնվրոպական աղբյուրները Բոնեմունդին առանձին նենդ մտադրություններ են վերագրում Բյուզանդիայի նկատմամբ:

Հյուսիսային իտալական քաղաքների մտանակցությունն արշավանքին՝ կապված էր այս քաղաքների առևտրական շահերի հետ, բայց այնտեղ ևլ շարժումը խոր մասսայական շարժման բնույթ չէր կրում, ինչպես ևր Ֆրանսիայում³⁾: Սիրիայում իտա-

չակիր գործին միացավ ծովահենական նավատորմը: «Նրանք (ծովահենները:—Պ. Կ.) հայտարարեցին, վոր իրենք քրիստոնեյական սուպետներ են Ֆրանդրիայից, Ֆրիզիայից ու Ֆրանսիայի այլ մասերից և վոր իրենք ութ տարի շարունակ ծովահեն են յեղել... Մովսյին այս հավաքախմբի մեջ կար մի վոմն Վինիմեր՝ նրանց բոլորի առաջնորդն ու ղեկավարը, վոր Բուլյոնից ևր, կոմս Յեվտաքիոսի տիրապետության շրջանից»: Հագիվ թե այս «ծովային հավաքախումբը կողոպտելիս լինեք բացառապես արար ծովազնայների¹⁾»:

8

Սաչակրաց արշավանքի կազմակերպիչները շարժման մեջ գանվող գյուղացիական մասաներին իրենց աղղեցությանը յինթարկելու համար պետք և ողտագործեցին այն ապիտատոր-քարողիչներին, վորոնք, ինչպես Պետրոս Անապատականը, ղեռ մինչև Կլերմոնի ժողովը սրբազան պատերազմ էլին քարողում մասանների մեջ: Վերջինս միջնորդի դեր ևր խաղում ֆեոդալական վերնախավի ու ժողովրդական մասաների միջև, և որչիկախվորեն նրա խնդիրն ևր գյուղացիության փախուստը գերիշխող դասակարգի համար ցանկալի հունի մեջ գնել և այս շարժումը կապակցել սուպետական արշավանքի հետ: Վոչ մի հիմք չկա առասպել համարելու նրա գործունեյությունն ու նրա նման անձանց գործունեյությունը մինչև Կլերմոնի ժողովը: Այս պատմումների առասպելական լինելու զեպում հարկ կլինեք պատասխանելու այն հարցին, թե ինչու առասպելն իր փոռապակով պատեց վոչ թե Ուրբանոս 2-րդի փայլուն ղեմքը, այլ Պետրոս Անապատականի, վոր ուներ մուլթ ծագում և մուլթ անցյալ: Սկզբնական աղբյուրների լուլթյունը մինչև Կլերմոնի ժողովը նրա գործունեյության մասին հեշտությամբ բացատրվում է նրանով, վոր այս աղբյուրները բղխում են վոչ այն վայրերից, վորտեղ ընթանում ևր Պետրոսի գործունեյությունը: Աննա Կոմնինան, վորի վրա հագիվ թե կարելի լինի կասկածել, թե նա

1) Gaufred. Malaterra, Muratori, 5-րդ հ., էջ 591, 599: Lupus Protospatarius, Rerum Napolit. Chron, նույն տեղում էջ 46:

2) Rad. Cadonensis, Gesta Tancredi, RC, 3-րդ հ., էջ 605:

3) Annales Pisani, MG SS, 18-րդ հ., էջ 239:

1) Albertus Aquensis, Hist. Hierosolymitana, RC, 4-րդ հ., էջ 348:

գանձում եր խաչակիրների մեջ տարածված առասպելների ազդեցութեան տակ, միանգամայն կոնկրետ պատմում և Պետրոսի անհանդու ուխտազնացութունը Յերուսաղեմ, նրա ընդհարուժները թուրքերի հետ և նրա դերն իբրև խաչակրաց արշավանքը նախաձեռնողի: Նա նույնիսկ հաղորդում է, վոր բյուզանդական կայսրը գիտեր այն մասին, վոր Պետրոսն առաջ տառապել և թուրքերից¹⁾: Նա, իբրև թե գիտեր արարելին և Սիրիայի տեղական պայմանները²⁾: Մի ավելի ուշ ապրող գրողի մոտ մի արձագանք և պահպանվել Պետրոսի ուղղիցիոն շրջանից, յերբ Պետրոսը «մեղադրում եր քրիստոնյա իշխաններին, վոր նրանք դատարկ բաներով են զբաղվում և սառնասիրտ վերաբերվում իրենց ժամանակի ազնուներին, վորոնց վերացման համար նրանց ուժերը կներեյին... նրանց մեղքը նրանով և ավելի ծանր, վոր նրանց հաղթանակն ապահովված կլիներ և այն ել այնպիսի գործում, վորից ավելի փառավոր գործ չկա³⁾»:

Պետրոսի արշավանքի գնալու մոմենտը վորոշվեց մի կողմից մասսանների անհամբերութեամբ, վորոնց չեր կարելի դապել զարուհը գալուց հետո մինչև պապի սահմանած ժամկետը, մյուս կողմից՝ ձմեռային արշավանքի անհնարին լինելը: Հանրահայտնի յե խաչակրաց արշավանքների գլուղացիական այն ջոկատների բախտը, վորոնք գնացին Պետրոսի, Գոաշալիի, Եմիխոյի և ուրիշների ղեկավարութեամբ, յեթե սոճասարակ կար ղեկավարութուն: Մերձհունոսյան քաղաքներում նրանք հրեզական վայրագ ջարդեր սարքեցին: Հրեյական ջարդերն այս դարերում ել գերիշխող դասակարգի սիրելի միջոցն եր իրենցից հեռացնելու կեղեքվածների զայրույթը և ուղղելու իրենց համար համեմատաբար անվտանգ հունով: Այս ջոկատների հակայական մասսան կոտորվեց ճանապարհին կամ Փոքր Ասիայում. նրանց մնացորդները միացան այն զորքին, վորն տրդեն ասպետների ղեկավարութեամբ—կենարոնանում եր Կոստանդնուպոլսում: Այս

1) Hagenmeyer, Peter der Fremite, Lpz., 1879, էջ 121; Anna Comnena RC grees, 1-ին հ., էջ 4,7:

2) La Chanson d'Antioche, Paris, 1-ին հ., էջ 42:

3) Benedictus Accolitus, De bello a Christo... gesto, RC, 5-րդ հ., էջ 534:

ջոկատներում շատ քիչ ասպետներ կային—ըստ յերևութին զրանք Գոտյե Չունեորի տիպի ասպետներ էյին¹⁾: Աղբյուրների մեծ մասը դասակարգային բացահայտ ատելութեամբ և վերաբերվում այս գլուղացիական արշավանքներին, մասնավորապես Պետրոսին: Եկեհիարդը նրանց կշտամբում և այն բանում, վոր նրանք վարկաբեկում էյին խաչակրաց արշավանքի վողջ դադարը²⁾: «Cesta»-ն պատմում և Պետրոսի մարդկանց անկարգութունները Կոստանդնուպոլսում³⁾: Պոետ Գիլոն հեզնական վոտանավորներ և նվիրում Պետրոսին, «Նրանց առաջնորդը Պետրոս Անապատականն եր, սրա համար միանգամայն անպետք... նրանք մի քիչ հոգ տարան փողի մասին, կարծելով, թե նրանց համար փող ամեն տեղ կգանվի, և վոր նրանք՝ ավետարանի քարոզիչներն ու հետևորդները, ավետարանից ամեն տեղ կստանան սնունդ և հագուստ⁴⁾»: Ռորերտ Կուսակրոնը պատմում և, վոր Պետրոսը մեծ հեղինակութուն եր վայելում համայնիկների մեջ և ավելի շատ եր հարգվում նրանց կողմից, քան վորևե յեպիսկոպոս կամ արքանայր, վորովհետև նա վոչ հաց եր գործածում, վոչ ել միս, սակայն գինի յեր լամում և ուտում մնացած ամեն մի ուտելիք, այսպիսով, հավակնելով ձգնավորի համբավի, սակայն միաժամանակ չհրաժարվելով յերկրային հաճույքներից⁵⁾: Գոաշալիը, ըստ Ալբերտ Ասխենացու, հակայական փող հավաքեց⁶⁾: Ռայնալդը, ըստ Բոգրի Գոլացու, իր յեղբայրներին մասնում եր թուրքերին⁷⁾: Վիլհելմ Կարպենտարին արշավանքի գնալուց առաջ կողոպտեց չբավորներին⁸⁾: «Համառ ու կամակոր ժողովուրդը չի կարողանում տանել ոգտակար կարգապահութեան լուծը⁹⁾»: Այս բոլոր բացասական բնու-

1) Röhricht, հիշ. աշխ., էջ 33—58:

2) Eccehardus, էջ 130:

3) Cesta, էջ 121:

4) Fulcherius Carnotensis, Gesta Francorum, RC, 3-րդ հ., էջ 704:

5) Robert. Monach., նույն տեղում, էջ 73:

6) Albert. Aquensis, RC, 4-րդ հ., էջ 289:

7) Baldricus Dolensis, նույն տեղում, էջ 19:

8) Guibert. Novig., նույն տեղում, էջ 173:

9) Guillelm. Tyr., RC, 1-ին հ., էջ 63:

թագրումները կարդալով, չի կարելի անջնջաբար անհել, վոր այս նույն աղբյուրներն ամենևին չեն վրդովվում խաչակիրների գլխավոր ուժերի գործած անկարգություններից ու վոճրագործություններից և վոր այս պատճառով նման բնութագրումներն միտումավորությունն անտարակուսելի յի: Բուրժուական պատմաբաններն ամբողջութամբ փոխ են առել աղբյուրների թըշնամանքը դեպի խաչակիրները: Ըստ Լյուշերի այդ, այսպես կոչված, ժողովրդական խաչակրաց արշավանքը վոչ մի ընդհանուր բան չունի իսկական խաչակրաց արշավանքների հետ¹⁾: Բրեյեն իսկական խաչակրաց արշավանք է անվանում միայն բարոնների արշավանքը²⁾:

Հակառակ Արևմուտքի, բյուզանդացիները լավ եյին վերաբերվում Պետրոսին, իբրև անվստանգ և դյուրաթիք մարդու: «Պետրոսը, ասում է Աննա Կոմնինան,—այս մեծ ճանապարհորդությունը կատարեց բացառապես սուրբ գերեզմանին յերկրպագելու նպատակով, իսկ մյուսները—բարոններն ու առանձնապես Բոհեմուսը—իրենց հին առելությունից դեպի կայսրը³⁾»: Յերբ Պետրոսի մարդիկ շարդվեցին թուրքերի ձեռքով, Պետրոսն ողնություն խնդրեց բյուզանդական կայսրից, պարտության ամբողջ մեղքը ցինիկարար գցելով մասսաների վրա: «Այսպես և արդեն լատինացիների համառությունը,—ասաց Պետրոսը,—ղըժբախտության մեջ, մեղավորը նա չէ այլ նրանք, ովքեր չեյին լսում նրան, այն ավագակները, վորոնք իրենց ուզած ձևով եյին ցանկանում վարվել և վորոնք առհասարակ արժանի չեն սուրբ գերեզմանին յերկրպագելու»: («Լատինացիների համառությունը» խոսքերը, վոր հիշատակված են Աննա Կոմնինայի մոտ, ըստ իս, Պետրոսի խոսքերն են և վոչ թե Աննայի, ինչպես սովորաբար մեկնաբանում են:—Պ. Կ.): Կիլլոմ Տիրացին, պատմելով նույն իրադարձությունների մասին, Պետրոսին և վերագրում համապատասխան լատինական խոսքերը⁴⁾: Մաչակիր գլխավոր զորքի մեջ Պետրոսը մասսաների մեջ կատարում էր հրամանատարական

վերնախավի գործակալի դեր, մասսաների, վորոնք զժվարությամբ եյին հարմարվում կարգապահության: Նա «մինչև Յերուսաղեմը վերցնելը մնաց զորքի մեջ և շատ բանով ոգտակար էր¹⁾»: «Զրույց Անտիոքի մասին»-ում նա մշտապես յերևում է «տաֆուրների» հետ միասին, վորոնց մասին կխոսենք ստորև: Պետրոսը, իբրև թե, խորհուրդ տվեց այս տաֆուրներին խժուկու թպանված թուրքերի դիակները: «Ձեր վախկոտությունից դուք քաղցած եք մնում,—իբրև թե ասել է նա նրանց:—Վերցրեք այստեղ ընկած թուրքերի դիակները: Յեփած կամ աղած նրանք շատ համեղ կլինեն²⁾»: Անտիոքի պաշարման ժամանակ Պետրոսի դասալքության փորձ անելուց և նրան բռնելուց հետո նրա հետ շատ ներողամատարար վարվեցին, բայց առանց վորևե հարգանքի: Պետրոսին ասացին. «Իու պետք է հավաքելիք քո փորը և խոտ ուտելիք, ինչպես անասուն: Ինչո՞ւ յես դու միշտ յերազում առատ սննդի մասին: Այդ չի սաղում վոչ քո կուսակրոնության աստիճանին, վոչ էլ քո ստոր ծագմանը³⁾»: Բայց խաչակիրների Ֆեոդալական վերնախավը շահագրգռված չէր իր գործիքը վարկաբեկելով, ուստի և խնայեց նրան: Յերկիմասա ու տարակուսելի բնույթ է կրում Պետրոսի ղեկավարությունը թուրքական եմիր Կերբոզի մոտ: Միքանի աղբյուրներ (Փուլքերիոս Ալբերտ, Ռայմունդ) պատմում են, վոր Պետրոսն եմիրին հանձնել է առաջարկ՝ Անտիոքի հարցը լուծել մենամարտով: Արար պատմաբան Իրն Մալպուսը հաղորդում է ուրիշ վերսիս, թե Պետրոսը խնդրել է թույլ տալ քրիստոնյաներին կենդանի դուրս գալու քաղաքից: Ըստ յերևույթին, Պետրոսի միջոցով ինչ-վոր բանակցություններ են վարվել, վորոնք դադարի եյին պահվում շարքային խաչակիրներից, և նա ղեկավար է ընտրվել հենց այն պատճառով, վոր ոժտված էր մասսաների վստահությամբ: Յերբ Պետրոսը ղեկուցում էր իր ղեկավարության արդյունքների մասին, Գոաֆրիդ Բուլոնացին նրան մի կողմ տարավ և պատվիրեց, բայց թողնելով մնացած ամեն բան, միայն համառոտ հայ-

1) Luchaire, հիշ. աշխ., էջ 232:
2) Bréhier, հիշ. աշխ., էջ 70:
3) Anna Comnena, RC, grecs, 1-ին հ., էջ 6:
4) Նույն տեղում, էջ 9:

1) Sigib. Gemblac., R, 13-րդ հ., էջ 261: Guilelm. Tyr., RC, 1-ին հ., էջ 58:
2) Chanson d'Antioche, 1-ին հ., էջ 31, 11, 1:
3) Hagenmeyer, Peter der Eremit, էջ 228 242; Hagenmeyer, Gesta, էջ 364; Chalandon, հիշ. աշխ., էջ 220:

տնեւ, վոր հարկավոր ե պատրաստվել կովելու¹⁾: Պետրոսը գանձապահ նշանակվեց խաչակիրներից գանձավող տասանորդի կեսի համար—այն կեսի, վոր հատկացված եր աղքատ քահանաների ու համայնիկների պահպանութեան համար: Այսպիսով, նրա ազգեցութունը նույնիսկ անտեսական հիմք ստացավ²⁾: Աննա կոմնինան նրան անվանում ե յեպիսկոպոս, վոր նմանապես վկայում ե նրա ունեցած մեծ նշանակութեան մասին³⁾: Այն հանգամանքը, վոր Պետրոս Անապատականի մասին տեղեկութուններ չկան նրա՝ Յեվրոպա վերադառնալուց հետո, բացատրվում ե նրանով, վոր առաջին խաչակրաց արշավանքի դաժան փորձից հետո, Պետրոսը վերջնականապես կորցրեց մասսաների վստահութունը և այս պատճառով դարձավ անպետք: «Հետո շատերը նրան կեղծավոր եյին համարում» (եկկեսարդ): Այնուամենայնիվ աղբյուրներում հիշատակվում ե Պետրոսի հայրենիք՝ պատվավոր մարդկանց շրջան վերադառնալու մասին⁴⁾:

9

1095 թիվն ամբերբի տարի յեր: «Յերաշտ ու սով և մահացութուն կային այն ժամանակ»⁵⁾: Մի խրոնիկա միամտորեն հիշատակում ե, թե «չնայած մեծ սով եր, գնացին Յերուսաղեմ»: Հատ յերևույթին, խրոնիկոսը չեւ ըմբռնում սովի ու արշավանքի կապի բնույթը: Իսկապես սովն արագացրեց մասսաների գնալը⁶⁾: Սաչակիրների ճանապարհվելու նկարագրութունը մեղցույց ե տալիս գյուղացիական մասսայական տարագրութեան բուրր տիպիկ գծերը: «Կարելի յե նկատել շատ նշանավոր յերևույթներ: Վորոշ չքավոր մարդիկ պայտած յեգներին ձիերի նման լծում եյին յիրկանիվ սայլերի և նրանց վրա կրում իրենց խղճ

ճուկ ունեցվածքն ու իրենց յերեխաներին: Յերբ ճանապարհին վորեւ քաղաք կամ գոյակ եր պատահում, յերեխաները հարցնում եյին.—սա չէ՞ արդոք Յերուսաղեմը, ուր եմք գնում մենք»¹⁾: Սաչակրի խաչը ծառայում եր նրա համար, վորպեսզի «ավելի անվտանգ գնան»²⁾: «Չքավորների տենչանքն այնքան ուժեղ եր, վոր վոչ վոք չեւ մտածում միջոցների պակասութեան մասին, իր տունը, խաղողի այգին կամ ցանքը կորցնելու մասին, և ամենալավ հողամասերն եժան եյին վաճառվում, կարծես թե մարդիկ նստած եյին մի ինչ-վոր սարսափելի բանտի մեջ, վորից հարկավոր եր շուտով ազատվել... Այն, ինչ թանգ եր մինչև արշավանքը, այժմ շատ եժան եր ծախվում: Ինչ-վոր հրաշք կատարվեց. բոլորը գնում եյին թանգ և վաճառում եժան: Թանգ գնով գնում եյին այն բոլորը, ինչ հարկավոր եր ճանապարհին, վորովհետեւ նրանք շտապում եյին. եժան եյին վաճառում, վորպեսզի միջոցներ ստանան արշավանքի համար»³⁾: Դաշտերը մնացին առանց սերմնացանի, տները՝ առանց ընակիչների, գնում եյին համարյա ամբողջ քաղաքներով: «Մարդիկ հեշտութեամբ կարվում եյին սովորական միջավայրից, վերանում եր նախկին՝ հայրենիքի սերը: Միայն աստվածն եր աչքերի առջև: Ամեն բան, ինչ հավաքված եր ամբարներում ու մառաններում, թողնվում եր... Ամուսինները գնում եյին իրենց կանանց և ամբողջ ընտանիքի հետ, իրենց ամբողջ սեփականութունը բարձում եյին սայլերին: Ճանապարհը նեղ եր նրանց համար: Յերկար շարքերով ձգվում եյին գումակները: Մարդիկ ասում եյին, թե 600 հազար մարդ ե գնացել, բայց իսկապես նրանք շատ ավելի եյին... Դեռ յիրբեք մարդկանց այսպիսի հսկայական մասսա չեւ յենթարկվել մի զեկավարութեան, կամ, վոր ավելի ճիշտ կլինի ասել, գնում եր առանց վորեւ զեկավարութեան»⁴⁾: Խրոնիկաներում նշված ե շարժման տարեբայնութունը, և հատկապես այս «շարժում» խոսքըն այստեղ հաճախ ե գործածվում: Ամբողջ աշխարհը ցնցվեց և փոխվեց⁵⁾: «Ուղղակի դարմանալի յեր, թե ինչպես այսպիսի մի

1) Guilelm. Tyr., RC, 1-ին հ., էջ 261:
 2) Hegenmeyer հիշ. աշխ., էջ 249—252. Raimund Argil., RC, 3-րդ հ., էջ 278.
 3) Anna Comnena, RC grecs, 1-ին հ., 62: Eccehardus, 1096; Albericus mon. Trium. Fontium, R, 13-րդ հ., էջ 668:
 4) Order, Vital., R, 12-րդ հ., էջ 585:
 5) Breve chronicon Wormannorum, R, 14-րդ հ. էջ 786:

1) Guibert Novig., RC, 4-րդ հ., էջ 142:
 2) Gesta Ambasiensium Dominorum, R, 12-րդ հ., էջ 505:
 3) Guibert. Novig., էջ 140:
 4) Guil. Malmesb., R, 13-րդ հ., էջ 6:
 5) Eccehardus, էջ 104:

հսկայական մասսա աստիճանաբար և խաղաղ շարժվում էր յերկրի վրայով առանց վորեն արտաքին ներգործութեան: Բոլորը սիրում էին միմյանց, և յեթե վորեւ մեկը մի բան էր գտնում, վորն իրեն չէր պատկանում, նա յերկար ժամանակ այդ պահում էր նրա համար, ով վոր կորցրել էր այդ իրը¹⁾: «Լեզվով ու ազգութեամբ տարբեր մարդիկ սերտաձեցին մի ամբողջութեան»²⁾: «Նրանք գնում էին, այսպես ասած՝ առանց գլխի»³⁾: «վոչ մի թագավոր, վոչ մի իշխան չկար այնտեղ: Բոլորի վրա թագավոր էր Քրիստոս»⁴⁾: Բոլորն զգում էին, վոր նախաձեռնութեանը վերեկից չի գալիս, և սա միամտաբար բացատրում էին նրանով, վոր «աստված անաչառ է»⁵⁾: Աննա Կոմիտիանն ու յայտն իրիստ տպավորութեան է ստացել այս մաստաների շարժումից, «բոլոր ճանապարհները լիքն էին նրանցով: Ֆրանսիական զինվորներին հետևում էին անգլեն բազմութեանները՝ մեծաքանակ, ինչպես ավազր, կամ ինչպես աստղերը, կանայք և յերեկաններ: Վորովհետև ամբողջ Արևմուտքը, Ադրիատիկ ծովից արեմուտք ասլորդ բոլոր բարբարոսները փոխադրվեցին Ասիա՝ իրենց հետ վերցնելով այն ամենը, ինչ նրանք ունեւին»⁶⁾: Ինչպես բոլոր մասսայական շարժումների մեջ, ամենակտիվ ու մարտական տարրերը, վոր գերիշխող դասակարգերն անվանում էին ավազակներ և այլն, հանդես յեկան առաջին պլանի վրա: «Գողերը, ծովահենները և ուրիշ վոճրագործներ յերես գուրս յեկան»⁷⁾: Միշտ չե, վոր գնում էին նրանք, վորոնց ուզում էին հեռացնել, և մասսան միշտ չե, վոր բավականաչափ «կարգապահ» էր: Ուստի սկսվում է քննադատութեան և ծաղր գերիշխող դասակարգի մի մասի կողմից. «շատ իրիստ էր գեղը»⁸⁾: «Ֆրանսիացիներին հեշտ էր համոզել

1) Radulf. Cogeshallensis, R, 13-րդ հ., էջ 217; Guil. Malmesb. նույն տեղում, էջ 7:

2) Eccehardus, էջ 93:

3) Guilelm. Tyr., RC, 1-ին հ., էջ 69:

4) Hugo Floriac., R, 12-րդ հ., էջ 364; Guil. Godellus, նույն տեղում, 10-րդ հ., էջ 672:

5) Vita B. Gaufridi, R, 14-րդ հ., էջ 348:

6) Anna Comnena, RC grees, 1-ին հ., էջ 4:

7) Order. Vital., R, 12-րդ հ., էջ 661:

8) Baldricus Dolensis, RC, 4-րդ հ., էջ 17:

թողնելու իրենց գաշտերը, վորովհետև միքանի տարի նրանց մոտ մերթ պատերազմներ էյին լինում, մերթ սով, մերթ մահտարածում... բայց համարյա ամբողջ գերմանական ժողովուրդը ծաղրում էր ասպետների, գյուղացիների կանանց ու յերեկանների այս բազմութեանները, վոր իրենց աներևակայելի հիմարութեամբ լքում էին վորոշակին, ձգտելով անորոշին: Լքում էին հայրենիքը, ձգտում էին ավետյաց յերկիրը, թողնում էին իրենց սեփականութեանը, ձգտում էին ուրիշ սեփականութեան»¹⁾: «Անժուժկալութեանը թագավորում էր նրանց մեջ, կային թեթև վարքի տեր շատ կանայք ու աղջիկներ, վորոնց հետ նրանք զբվարձանում էին»²⁾: Բոլորը չե, վոր ասածու հետ գործ ունեւին: Գնում էին, վորպեսզի չբաժանվեն իրենց բարեկամներից, վորպեսզի դավաճաններ չհամարվեն, կամ ուղղակի թեթևամտորեն, կամ վորպեսզի հիմար դրութեան մեջ զնեն իրենց պարտատերերին»³⁾: «Մասսան շատ հեշտութեամբ ճանապարհ ընկավ»⁴⁾: Հավանաբար խաչակրաց արշավանքի ազիտատորները, հաճախ էին նշում, վոր ճանապարհի միջոցների մասին չարժե առանձնապես հոգ տանել, վորովհետև աստված իր մարտիկներին ամեն անհրաժեշտ բան կտա»⁵⁾:

Շատ հետաքրքրական է բուրժուական պատմագրութեան վերաբերմունքը դեպի մասսաների, այսինքն՝ առաջին հերթին գյուղացիութեան պրորբնը խաչակրաց արշավանքների մեջ:

Զիրին զգացել է շարժման տարերայնութեանն ու պոտենցիալ հեղափոխականութեանը, բայց նա իրիստ բացասաբար է վերաբերվել մասսայական շարժումներին և այս մոմենտն ողտազործել է հակապրոլետարական հարձակումների համար: «Նրանք պետք է գնային, վորպեսզի սովից չմեռնեյին, ավելի լավ է ուղղակի թշնամու յերկիրը, վորովհետև միայն պատերազմով նրանք կարող էին կերակրվել նրանք ամենաչնչին

1) Eccehardus, 105, 111:

2) Albertus Aquensis, RC, 4-րդ հ., էջ 291:

3) Guilelm. Tyr., RC, 1-ին հ., էջ 43:

4) Bertholdus Constantiensis, Appendix, R, 11-րդ հ., էջ 684:

5) Hagenmeyer, Gesta, էջ 121; Epist. Symeonis, Hagenmeyer, Kreuzzugsbriefe, էջ 141:

Հափով իսկ մտադրութիւնն չունենին միանայու իշխանական առաջնորդները կարգապահ բանակին... Նրանք իրենց համարում էին յերկնային ու յերկրային յերանութեան ուղիղ ճանապարհի վրա: Ուստի նրանք չէին ուզում սպասել ազնվականներին, վորոնց ճնշման տակ նրանք հեծում էին մինչ այդ... Նրանք միանգամայն կտրվեցին իրենց հայրենիքի սեփական կարգերից, նույնիսկ ամենաբացահայտ կռիվ հայտարարեցին այդ կարգերին... Յես չեմ ընդունում այն պնդումները, թե այս արշավանքներն ազատագրեցին Յեվրոպան և խաչակրաց արշավանքը (այսինքն՝ ասպետական) — պրոլետարական թափթփուկներից, վորովհետև այս ջողատների մեծ մասը կազմված էր վոչ թե չունեորների ամբոխից, այլ գյուղացիներից, վորոնք միայն շարժման ժամանակ կորցրին իրենց սեփականութունը կամ հրաժարվեցին նրանից: Նրանք կոտորվեցին իրենց բարոյական կացութեան պատճառով, այն ժամանակ, յերբ խաչակիրների դըրխավոր զորքը, թեև նրա մեջ պակաս չէին վատ տարրերը, պահպանվեց կարգապահութեան շնորհիվ: Համենայն դեպս, այստեղ յերևում է, թե ինչպիսի դիվային ուժեր են թագնված մասսայի մեջ, վորոնք պատրաստ են զուրս պրծնելու ամեն մի ուժգին շարժման ժամանակ¹⁾: Մեջ բերված քաղվածքում ամբողջովին բացվում է Զիրելի դասակարգային դեմքը: Պրուսական յունկերութեան ներկայացուցիչը կներբ խաչակրաց արշավանքներին, յեթև նրանք Յեվրոպան ազատեցին պրոլետարական ամբոխից, բայց վոր նրանք անհնազանդութեան վոզի մտցրին գյուղացիութեան մեջ, խախտեցին հայրենական հիմքերի հենարանը, այդ վոչ մի կերպ չի կարելի ներբ:

Բրեյեն նույնպես այս առթիվ խոսում է «բոլոր ժամանակաշրջաններում մասսայի ցուցարեբած վայրենութեան» մասին: Խաչակրաց շարժման մեջ տարերայնութուն ու պոտենցիալ հեղափոխականութուն զգացել և նսև Ո. Ա. Գորիաշ-Ռոժդեստովնսկայան: Բայց նա տարորինակ կերպով ինչ-վոր հակասութուն և տեսնում մասսաների «ստեղծարար հուզմունքի» և սովի ու կարիքի վերաբերյալ յուրերի միջև: Չե վոր կարիքը միշտ չէ, վոր հասցնում է կեղեքիչ կացութեան, այլև հանդիսանում է

¹⁾ Siebel, հիշ. աշխ., էջ 237, 254:

հեղափոխական շարժումների մայրը, առանձնապես այն ժամանակ, յերբ գերիշխող դասակարգերի մեջ շփոթվածութուն է նկատվում: Ավելի մոտ և ճշմարտութեան Ֆ. Ի. Ուսպենսկին. «Առաջին խաչակրաց արշավանքում առաջին պլանի վրա նախ հանդես է գալիս ժողովրդական շարժումը, նա գնում էր առջևից և, ամենայն հավանականութեամբ, առաջացրեց բարձր դասակարգերի շարժումը¹⁾: Պատմական իրականութեան հետ վոչինչ ընդհանուր չունի Շալանդոնի այն կարծիքը, թե զգացվեց Արեմարի՝ Պյոտի յեպիսկոպոսի կարիքը, վորպեսզի արշավանքի մեջ «գրավվի» ամբոխը, — ամբոխ, վորին Շալանդոնը հավասարեցնում է հոտի հետ: Նույն Շալանդոնը բացասում է միահամուռ խանդավառութեան առկայութունն արշավանքի սկզբում²⁾: Բրեյեն գտնում է, վոր Ուրբանոսի յելույթի հաջողութունն անսպասելի յեր³⁾:

Խաչակիրների քանակի հարցը շատ էյական հարց է: Իհարկե, շատ հեշտ և ասել, ինչպես այդ անում է Շալանդոնը, թե այս քանակը չի կարելի վորոշել⁴⁾: Բայց վորեք, գեթ մոտավոր գաղափար չունենալով այս քանակի մասին, առհասարակ չի կարելի ճիշտ գնահատութուն տալ խաչակրաց արշավանքին: Ընդունելով, վոր աղբյուրների տված թվերը սովորաբար խիստ չափազանցված են, յես այնուամենայնիվ այն կարծիքին եմ, վոր այս քանակը բավական մեծ էր, հասնում էր հարյուր հազարների, և վոչ թե տասնյակ հազարների, ինչպես որենակ, վորձում է ապացուցել Սանվենտոնը: Այս գիպում յես ամենից առաջ հենվում եմ մասսայական արագագոյթի այն կոնկրետ նկարագրութունների վրա, վորոնց մի մասը տրված է վերև: Միթե, որինակ, գների հակոյական անկումը հետևանք կլինեք խաչակիրների աննշան մասի հեռացման, և այն ել սովի տարիներին: Յեթև հազվի առնենք, վոր խաչակիրների մեծ մասը Ֆրանսիացիներ էին և վոր Ֆրանսիական բնակչութունը, լասս-

¹⁾ Ֆ. Ի. Ուսպենսկի, հիշ. աշխ., էջ 12:

²⁾ Chalandon, հիշ. աշխ., էջ 39, 110, 186:

³⁾ L. Bréhier, հիշ. աշխ., էջ 66:

⁴⁾ Chalandon, հիշ. աշխ., էջ 112: Luchaire, հիշ. աշխ., էջ 233: Prutz, հիշ. աշխ., էջ 94:

սերի հաղթումներով, 11-րդ դարում 8 միլիոնից ավելի չեր, ապա խաչակրաց արշավանքը հարկավոր և համարել բավական ուժեղ «արյունառություն»:

Բյուզանդական կայսեր քաղաքականությունը խաչակիրների վերաբերմամբ գլխավորապես հետադիմում էր այս վտանգավոր հյուսիսային կայսրության միջով անվնաս փոխադրելու նպատակը: Այս մասին շատ պարզորոշ խոսում է Աննա Կոմնենան. «Անցնողներին պետք է լավ ընդունել, նրանց համար առատ ուտելիքների պաշարներ պատրաստել, բայց հարկավոր է հետևել նրանց և թույլ չտալ ուրիշ կողմ թեքվելու»: Սաչակիրների առաջնորդներին կայսրը հարուստ նվերներ ու աստիճաններ ավեց և սրա փոխարեն պահանջեց նրանցից յերգվել համատարմության համար: Կայսրն այն ժամանակ բացառապես զբաղված էր խաչակիրներով, ընդօրում վերջիններին առաջնորդներն այնքան էլին վշտացնում նրան իրենց հարցերով ու պահանջներով, վոր «խեղճ կայսրը, նրա զստեր տեղեկություններով,—ժամանակ չունեի ճաշելու¹⁾»: Սաչակիրների թշնամական արամադրությունը Բյուզանդիայի դեմ գլխավորապես բացատրվում է նրանով, վոր նրանք արդեն արշավանքի սկզբին ի դեմս Բյուզանդիայի պետական ապարատի խոչընդոտ էլին տեսնում հոգեր գրավելու իրենց ձգտմանը, իսկ ի դեմս բյուզանդական իշխանությունների՝ անդանյութերի չարաշահությամբ զբաղվողների: «Cesta»-յի հեղինակը վրդովվում է, վոր խաչակիրների առաջնորդները հավատարմության յերդում են տվել կայսեր, և պատմում է այս առթիվ խաչակիրների մեջ յեղած խոսակցությունների մասին («միթե առաջնորդները մշտապես ծաղրի յեն յենթարկելու մեզ»), բացատրելով այս վերջիվերջո նրանով, վոր նրանք (առաջնորդները) ստիպված էլին այդ անելու:

Սաչակիր զորքի մեջ գործում էլին դասակարգային խոր հակասություններ: Նրա քաղցած, ազատատենչ մասան հակազրվում էր ասպետական վերնախավին, վորն Արևելքում վորո-

նում էր նոր ֆեոդալական կարվածքներ: Մասան այս վերնախավի հետ կապված էր ֆեոդալական հասարակարգի համար վոչ սովորական հասարակական կապերով (ճորտական կախում), այլ մի կողմից չքավորների յուրատեսակ ազատ միությամբ և, մյուս կողմից, հարուստների, զինված ուխտավորների միությամբ: «Յերբ մեծ բարոններից վորեւ մեկը խաչ էր վերցնում, ապա ավյալ վայրի խաչ վերցրած բոլոր մարդիկ գալիս էլին նրա մոտ և նրան ընտրում առաջնորդ, յերգվում էլին նրան, վոր աջակցություն ցույց տան ճանապարհին¹⁾»: Սաչակիրների վերնախավերը ձգտում էլին մասսաների մարտունակ տարբեր դարձնել իրենց վարձկանները և անջատվել ֆեոդալներից, նրանց թողնելով իրենց բախտին: Անախորում նրանք առաջարկեցին, վորպեսզի միջոցների կարիք զգացողները ծառայության մասնն իրենց մոտ²⁾: Շատ մարդիկ մեռան առաջնորդների անտարբեր վերաբերմունքից: Արդեն Բալկանյան թերակղզով անցնելիս տեղական բնակիչներն սպանում էլին «խնչպես վոչխարների՝ պատավ կանանց և հիվանդներին, վորոնք իրենց թուլության պատճառով հետ էլին մնում մյուսներից³⁾: Այս հողի վրա Տարս քաղաքում կատաղի ընդհարում տեղի ունեցավ խաչակիրների մասսայի և առաջնորդների միջև: Մի անգամ զիշերը Բոնոմունդի զորքից յեկան 300 հոգի, և նրանք, Բալդուինի հրամանով, քաղաք չթողնվեցին: Նրանք հոգնել էլին յերկար ճանապարհից, ուտելիքի պաշար չունեյին և շատ էլին խնդրում իրենց թողնել մասնելու քաղաք: Նրանց համար խնդրում էլին հասարակ մարդիկ, վորոնք դանվում էլին քաղաքում, բայց նրանց չթողեցին: Բայց խզմարով նրանց, ժողովուրդը քաղաքի պատից կողովներով հաց իջեցրեց նրանց և տկերով՝ գինի...զիշերը թուրքերը նրանց կոտորեցին...ժողովուրդը շատ ցավեց սրա համար և զենքի դիմեց Բալդուինի և ուրիշ առաջնորդների դեմ, նրանց համարելով իրենց ընկերների մահվան պատճառ, վորովհետև պատշաճ հյուրընկալութուն ցույց չտվին նրանց...Յեթե առաջնորդ-

1) Guilelm. Tyr., RC, 1-ին հ., էջ 45; Hagenmeyer, Gesta, էջ 29; Kugler, Geschichte der Kreuzzüge, Berlin, 1880, էջ 30:
2) Hagenmeyer, Gesta, էջ 152, 385; Robertus Monachus, RC, 3-րդ հ., էջ 837:
3) Raim. Argil., նույն տեղում, էջ 235:

1) Anna Comnena, RC greca, 1-ին հ., էջ 61

ները չի՛ ազնվեցին աշտարակներում, ապա ժողովուրդը նրանցից վրեժ կու՛ծեր իր յեղբայրների մահվան համար... Միայն շոգոքորթի և այս դրու՛թյան մեջ հարկավոր ճառերով Բաղուխը հանգստացրեց ժողովրդին¹⁾»։ Այսպես կոչված «տափուրները», վորոնց մասին խոսում են աղբյուրները, չբավորների ինքնուրույն կազմակերպված ջոկատներ էյին, և, թեև աղբյուրները բացահայտ արհամարհանքով ու հակակրանքով են վերաբերվում նրանց, նրանք բավական զեր խաղացին։ Նրանք յենթարկվում էյին միայն իրենց սեփական առաջնորդներին, զինված էյին նիղակներով, մահակներով, մուրճերով ու դանակներով։ «Ջրույց Անտիոքի մասին»-ը պատմում է, վոր նրանք իրենց ծառայության համար իրրև վարձատրություն, իրավունք ստացան առաջինը զրոհելու Յերուսաղեմ²⁾։ «Տափուր» խոսքը, ըստ յերևույթին, արարերեն է, վոր արհամարհական նշանակություն ունի և նշանակում է չբավոր, չունեոր մարդ³⁾։ առաջնորդներն այս ջոկատներին համարձակվում էյին մոտենալ միայն զինված։ «Ջորքի մեջ կար նաև այնպիսի ժողովուրդ, վորը բորիկ էր գնում, անզեն, անխող, միանգամայն գջլոված։ Նրանք գնում էյին բուլորի առաջից, կերակրվում էյին ինչով պատահեր... ժամանակ առ ժամանակ նրանք խուզարկում էյին իրենց ընկերներին, և, յեթե վորեւ մեկի մոտ փող էյին գտնում, նրան ստում էյին, վոր նա զենք գնի իր համար և անցնի զինվածների կողմը⁴⁾»։ Իմիջի այլոց, 15-րդ դարի մի վավերագրում հիշատակվում է մի իսպանական ազնվական՝ Պեդրո Տափուր, վոր ցույց է տալիս այս անվան տարածված լինելն արաբական ազդեցություն ունեցող յերկրներում⁵⁾։

1) Guilelm, Tyr., RC, 1-ին հ., էջ 144:

2) La conquete de Jerusalem, հրատ. Hippeau, Paris, 1868, էջ 81:

3) Li estoire de Jerusalem, էջ 624: La Chanson d'Antioche, 1-ին հ., էջ 135, 216, 219; 2-րդ հ., էջ 127, 128, 221, 254, 294, 370:

4) Guibert. Novig., RC, 4-րդ հ., էջ 242:

5) Արդի իսպաներենում տազուր, պորտուգալերենում՝ տափուր, նշանակում է խաղացող կամ խարերա (Du Cange, Archive de l'Orient latin, 1-ին հ., էջ 283):

Մասան անվատանությամբ էր լցված դեպի առաջնորդները։ Նրա մեջ շատ լուրեր էյին տարածվում վերջիններիս դավաճանության մասին¹⁾։ Շատ ճիշտ գիտողություն է արել Հագենմայերը։ «Cesta»-յի հեղինակն սկսած 1098—1099 թ. թ. ձմեռվանից այլևս վոչ մի գովասանական մակդիր չի գործածում առաջնորդների վերաբերմամբ, ըստ յերևույթին, փոխելով իր կարծիքը նրանց մասին²⁾։ Թվում է, թե այն հերետիկոսներին, վորոնց դեմ խաչակիրները առաջնորդներն ուղնության են դիմում Ուրբանոս 2-րդին, պատկանում էյին վոչ այնքան սիրիական և ուրիշ հերձվածողները, վորքան խաչակիր զորքի ոպողիցիոն տարրերը³⁾։

Առաջնորդների ձգտումը՝ ավելի շուտ տմրանալու Միրիայում, Մարրա քաղաքում հանգավ բացահայտ խոտվության, վոր զուգորդվեց ամբողջ ավերման հետ։ «Ժողովուրդն սկսեց պահանջել վոր առաջնորդներն արշավանքի գնան Յերուսաղեմ, վորովհետև այդ էր արշավանքի նպատակը։ Հակառակ դեպքում մարտիկներից մեկին նրանք առաջնորդ կընարեն⁴⁾»։ «Ժողովուրդն ըսկսեց վրդովվել, վորովհետև առաջնորդներն ամեն մի քաղաքի համար վեճեր են սկսում»։ «Թող նրանք սուրբ նիղակը տան ժողովրդին, և ժողովուրդը կգնա Յերուսաղեմ, և առաջնորդ կլինի ինքն աստված... «Մա ինչ բան է։ Անտիոքի համար վեճ, Մարրայի համար վեճ։ Միթե ասածու մեզ տված ամեն մի քաղաքի համար կլինեն առաջնորդների վեճեր և վտանգ աստծու դորքի համար։ Մենք այլևս թույլ չենք տա վիճելու Մարրա քաղաքի համար։ Կգնանք և կխորտակենք պարիսպները, և այն ժամանակ խաղաղություն կլինի առաջնորդների մեջ... Յեղ նույնիսկ թույլերն ու հիվանդները վեր կացան իրենց մահիճից և մոտեցան պարիսպներին, հենված անթացուպերի վրա, և խորտակեցին զրանք⁵⁾»։ Առհեմ Ռայմունդ Տուլուզացին այս անցքը համարում

1) Guilelm. Tyr., RC, 1-ին հ., էջ 255:

2) Hagemeyer, Gesta. էջ 29:

3) Epist. Manasse, համ. Ramensis; Hagenmeyer; Kreuzzugsbriefe, էջ 176; համեմ. նույն տեղում, էջ 164:

4) Guilelm, Tyr. 279:

5) Raim. Argil., RC, 3-րդ հ., էջ 270:

եր «ասածու ցուցում» և հաշտվեց պարիսպները խորտակման հետ: Գարբալ քաղաքի պաշարման ժամանակ «ժողովուրդը դժգոհ էր քաղաքի առաջ սպասելուց և ուզում էր ճանապարհը շարունակել, այս պատճառով նա չջանաց, նույնիսկ Տուլուզի կամսին մոտ կանգնած մարդիկ դիմամբ խուսափում էին մինչև այն ժամանակ, քանի գեա կոմսի համար ձանձրայի չէր և նա շարունակեց արշավանքը»¹): Պրովանսացիները ողողվեցին ընդդեմ Ռանձուկի թեկնածութան Յերուսաղեմի գահին—նույնպես նշան է, վոր մասսան չէր ուզում Սիրիայում հաստատել հայրենիքի կարգերը²): Թվում է, վոր ապագա պատրիարք Արնուլֆն այս տրամադրությունները դեմադողելի կերպով ոգտագործում էր իր անձնական նպատակների համար³):

11

Թաշակիր զորքի միջի դասակարգային հակասություններն ավելի ու ավելի էին սրվում և անդրադառնում խաչակիրների գիտակցության վրա: Անտիոքի պաշարման ժամանակ զորքի մեջ տիրող սարսափելի սովից բոլորը միատեսակ շտուժեցին: Մեռնում էին նրանք, ովքեր միջոցներ չունեին մթերքներ գնելու համար»: Յեթե խրոնիկոսները պատմում են, թե Գոտֆրիդ Բուլյոնացին հսկայական գին էր ապրիս մի կտոր ուղտի մսի համար և վոր, բացի Ռայմունդից, բոլոր առաջնորդները մուրացիկության մեջ էին, ապա սա բացահայտորեն ջատագովական բնույթ ունի: Այս սարսիխակ բանակում գինովորները վաճառում էին նույնիսկ իրենց գենքը, և գանվում էին մարդիկ, վոր գենքը գնում էին և դրանով խի, թերևս հնարավորություն ստանում սուրկացիներու ուրիշներին: Առանձնապես հանգուլն սպեկուլյանտներ կային պրովանսացիների մեջ, վորոնք գաղտնաբար ձիեր էին սպանում միսը վաճառելու համար: Ինքը Ռայմունդը միակն էր առաջնորդների մեջ, վոր ընդհանուր կարիքի ժամանակ հարըստացավ: Արարական անգեկություններով, Մարբայում չարաշա-

հում էին նույնիսկ ջրով¹): Առաջնորդների մեջ անվերջանալի վեճեր էին տեղի ունենում ապագա սիրիական կալվածքների շուրջը: Մասնակիորեն (Տանկրեդը) նրանք անջատ բանակցություններ էին վարում թյուրքերի հետ՝ վերջիններխ ներքաշելով իրենց յերկպատակությունների մեջ: Նրանց հոգեբանությունն առանձին ցայտունությամբ հանդես է գալիս Ստեֆան Բլուացու իր կնոջը գրած նամակում. «Թանկագինս, կայսրը միքանի անգամ խնդրել է ինձ, վորպեսզի մեր վորդիներից մեկին տանք նրա մոտ ծառայելու: Նա խոստանում է այնպիսի փայլուն գիրք ըստեղծել նրա համար, վոր նա մեզ չի նախանձի: Առհասարակ կայսեր նման մարդ այլևս չկա լուսնի տակ: Մեր բոլոր առաջնորդներին նա հարուստ նվերներ է պարգևում: Ասպեաներին նվերներ է ապրիս, չքավորներին՝ սնունդ... Նիկիա քաղաքի ավարից նա վոսկի, արծաթ, ակնեղեն, հագուստ ու ձիեր բաշխեց ասպեաներին, ուսելիքի պաշարներ՝ ժողովրդին: Իսկ առաջնորդներին նա պատվիրեց նվերներ սալ իրենց սեփական գանձարանից... հավատացիր թանկագինս, վոր հիմա յես յերկու անգամ ավելի վոսկի ու արծաթ ունեմ, քան այն ժամանակ, յերբ հեռացա քեզանից»²): Սա դրում է այն նույն Ստեֆան Բլուացին, վորը խայտառակ կերպով դասալիք դարձավ այն բարետես պատրվակով, թե պեաք է բուժվի: Ակներեկ, վոր նա բավականաչափ կողոպտել է և ցանկացել տուն վերադառնալ՝ Յերուսաղեմի նվաճումը թողնելով ուրիշներին³): Դասալքությունն ու հուսալքումը խաչակիրների մեջ սկսվեցին դեռևս ճանապարհին: Արդեն Բարի նավահանգստում խաչակիրներից վոժանք վաճառեցին իրենց գենքը և վերադարձան տուն: Դասալքությունն առանձնապես մեծ չափեր բնդունեց Անտիոքի պաշարման ժամանակ և նրանից հետո: Հարկ յեղավ ծովային նավահանգիստներում առանձին պահակախմբեր նշանակել հասարակ ժողովրդի դասալքության դեմ կովելու համար: Ականավոր խաչակիրներին չէին համարձակվում բռնել. «նրանց համար ճանապարհը բաց էր» (Ռադուլֆ

¹) Hagenmeyer, Gesta, էջ 135; Guilelm. Tyr., էջ 146; Raim. Argil., էջ 285; Alber. Aquensis, էջ 412:

²) Epist. Sfehani, RC, էջ 885, 888:

³) Guilelm. Tyr., 1-ին հ., էջ 210, էջ Hagenmeyer, Gesta, էջ 353; Chanson, d'Antioche, 1-ին հ., էջ 126:

¹) Guilelm. Tyr., 303:
²) Raim. Argil., էջ 301; Chalandon, հիշ. աշխ., էջ 367:
³) Raim. Argil., էջ 302; Guilelm. Tyr., էջ 46, 304—369:

կանոնացին): Առանձնապես շատ ելին խոսում վիլհելմ կարպենտարիոսի դասալքության մասին Պետրոս Անապատականի հետ և այսպես կոչված «լարագնացների» մասին, վորոնք լարերով իջել ելին պաշարված Անտիոքի պարիսպներից: Իհարկե, այնպիսի մեծ անձնավորության դասալքությունը, վորպիսին Սահֆան Բյոււացին է, ջանում ելին թագցնել: «Միթե կարելի չե խոսել դասալքության մասին, յերբ պատճառը հիվանդությունն եր»¹⁾:

Դածանությունը, ազանությունն ու սանձարձակությունն ամենասարսափելի ձևերով հանդես յեկան խաչակիր զորքի մեջ: «Ֆրանկներն արարական վրաններում գանված կանանց վոչ մի վատ բան չեյին անում, բացի նրանց փորի մեջ նիզակ խրելուց», — պատմում է Ֆուլքերիոս Շարտրացին: Հենց նա ել հայտնում է, վոր խաչակիրները ձեղքում ելին սպանված թյուրքերի դիակները, վորպեսզի նրանց ստամոքսում գանեն նրանց կուլ աված արժեքավոր իրերը: Բողբի Դուլային նույնիսկ նշում է, ինչպես և «Cesta»-յի հեղինակը, վոր այս անում ելին նրանք, ովքեր ուզում ելին ավելի կարգին ապրել²⁾: «Յուրաքանչյուրը կողոպտում եր իր համար և չեր մտածում ընդհանուր շահերի մասին»³⁾: Հայտնի չե, թե ինչ սարսափներ և կրել խաչակիրների գրաված Յերուսաղեմը:

Այս փաստերի ֆոնի վրա ծիծաղելի չե թվում Բողբի Դուլացու փորձը խոսելու խաչակիր զորքի որինակելի բարոյականության մասին: «Բողբն ապրում ելին պարզ և վողջամիտ, և ճամբարը բարոյական դատտիրակության դպրոց եր... վորովհետև չկա ավելի ողտակար բան մարդու համար, քան կարգապահությունը»⁴⁾: Իսկ իրականում գեթ ամենատարրական կարգապահության համար հարկ եր լինում կիրառել այնպիսի հուսահատական միջոց, ինչպես սուրբ նիզակի գյոււտի բեմադրումը: Կլեյնը մանրամասն վերլուծել և այս լավ կազմակերպված խաչակիրության ամբողջ ընթացքը, վարտեղ վոչ-անկարեղ դեր և խաղացել ինքը Ռայմունդ Արգիլացին, վորը դեռ հանդգնություն

1) Radulf. Cad; RC, 3-րդ հ., էջ 650:

2) Fulch. Carnot., նույն տեղում, էջ 359, 360. Hagenmeyer, Gesta, էջ 156; Baldricus Dolensis, RC, 4-րդ հ., էջ 87:

3) Raim. Argil., RC, 3-րդ հ., էջ 242:

4) Baldricus, Dolensis, էջ 95:

ունի այս խաչակիրության վերաբերյալ իր պատմածը վերջացնելու հետևյալ պաթեթիկ խոսքերով. «Ազերսում եմ բոլորին հավատալու ինձ, վոր այս բոլորն այսպես տեղի ունեցավ: Յեթե յես վորեւ բան սխալ հաղորդեցի, ապա թող աստված ինձ ուղարկի դժոխքի բոլոր տանջանքները և ինձ ջնջի կյանքի գրքից: Թեև յես քիչ բան գիտեմ, բայց յես գիտեմ, վոր քանի վոր ինձ կարգել են սուրբ աստիճանի մարդ, ապա յես պետք է լսեմ աստծուն և չբխարեմ»: Դժվար և յենթադրել, վոր Ռայմունդ Տուլուզացին ել իրագրել չլիներ իր կապելյանի ղեկավարած գործին¹⁾:

12

Սիրիայում, Յերուսաղեմի թագավորության մեջ, Յեղեսիայի, Անտիոքի ու Տրիպոլիի կոմսություններում նոր ստեղծված ֆրանսիական գաղութներում գրությունը շատ ծանր եր: «Ավետյաց յերկրի բնակիչներն ամենորյա տանջանքներ են ապրում, անջատված իրենց հարազատներից, բավականաչափ միջոցներից զուրկ՝ նրանք յենթարկվում են հարձակումների, մշտական յերկյուղի մեջ են նենգ բարբարոսներից, անընդհատ պատերազմներ են վարում պարսիկների ու յեգիպտացիների դեմ» (եկկեհարդ¹⁾: Տեղական բնակչությունը գաղութարարներին ատում եր և առիթի յեր ըսպասում, վորպեսզի վնասի նրանց: Յեվրոպացիք գերիշխող դասակարգ ելին կազմում իրբև հողագործներ, առևտրականներ կամ պրոֆեսիոնալ զինվորներ: Իսկ աշխատավորական մասսաններն արարներն ելին և սիրիացիք, վորոնք մասնակիորեն իջեցված և հասցված ելին սարուկների գրության: Նրանք հրաժարվում ելին դաշտերը մշակելուց և քաղցը նախընտրում ելին գաղութարարների համար աշխատելուց:

Յերկար ժամանակ խաչակիրներին վոչ միայն անհրաժեշտ ոգնություն չեր գալիս Յեվրոպայից, այլև նույնիսկ այն խաչակիրները, վորոնք ապրում ելին Սիրիայում, մտածում ելին հայրենիք վերադառնալու մասին: Հարկ յեղավ առանձին որենք հըրատարակելու, վորի համաձայն մի տարուց ավելի բացակայած մարդիկ կորցնում ելին իրենց հողային տիրապետության իրա-

1) Raim. Argil., RC, 3-րդ հ., էջ 275:

2) Eccehardus, էջ 309:

վունքը: Ինքը Գոտֆրիդ Բուլյոնացին միտք ուներ վերադառնալու տուն¹⁾: Յերուսաղեմի թագավորը ղեկավարութամբ կարողացավ միջոցներ հավաքել շատ փոքրաթիվ, մասամբ թյուրքերից կազմված զորքի բռնակը վճարելու համար: Նա խնդրեց պատրիարքին յեկեղեցական յեկամուտներից վորոշ միջոցներ տալ իրեն, բայց քիչ բան ստացավ, և Յերուսաղեմի ասպետութունը հայտնում եր պատրիարքին, վոր նա «խժուկ և հավատացյալների անսահման նվերները»: Հարկ յեղավ հատուկ հարձակումների ձեռնարկելու արարական քարավանների վրա, վորպեսզի անհրաժեշտ միջոցներ ձեռք բերվեն, վորովհետև առանց սրա ասպետները կհրաժարվեին Յերուսաղեմում մնալուց և «սրբազան վայրերը» պաշտպանելուց: Անտիոքի իշխանության ասպետների մի մասն ուղղակի ծառայության մտով բյուզանդացիների մոտ թագավորի իշխանութունն աննշան եր վասսալների նկատմամբ²⁾: Աղքատացած ու հուսալքված շատ խաչակիրների վերադարձը, իհարկե, չեք նպաստում նոր արտագաղթողների գալուստ: Միայն 1101 թ. Սիրիայում յերևացին Փրանսիացիների, լոմբարդների ու գերմանացիների նոր ջոկատներ: Բնորոշ ե, վոր Միլանում պատարեհյան տարրերը տրամադրված էին արշավանքի դեմ³⁾: Շատ տարագիրներ Սիրիայում մնալը համարում էին ժամանակավոր: Որինակ, 12-րդ դ. մի վավերագրից մենք իմանում ենք, վոր Շալոնից (Մաունի վրա) վոմն կոշկակար Կոնստանտին գնացել է Յերուսաղեմ, յերբ ուզել են ստիպել նրան հարկեր տալու, վորոնցից առաջ նա ազատված եր... Յեվ յերբ Շալոնի յեպիսկոպոսն ինքը գալիս է Յերուսաղեմ, Կոնստանտինը նրա միջոցով ազատվում է այդ հարկերից և վերադառնում տուն:

Իտալական առևտրական քաղաքներն ոգտագործում էին սիրիական իշխանների ծանր դրությունը, վորպեսզի նրանց յենթարկեն իրենց շահագործմանը, ընդվորում, իհարկե, բանն

¹⁾ Orderic. Vital.; Guilelm. Tyr., RC, 1-ին հ., էջ 393:

²⁾ Alber. Aquensis, RC, 4-րդ հ., էջ 545, 693:

³⁾ Eccehardus, էջ 223; Landulfus de S. Paulo, Historia Mediolanensis, MG SS, 8-րդ հ., էջ 22; համ. L. Bréhier, հիշ. աշխ., էջ 82—97; Prutz, հիշ. աշխ., էջ 307—382; Sybel, հիշ. աշխ., էջ 521—531; Riant, inventaire ann. 1153:

առանց ընդհարման չի վերջանում: Արդեն 1099 թ. մայիսին Ռոզոս կղզու մոտ ձակատամարտ տեղի ունեցավ վենետիկցիների ու պիզացիների միջև: Ճենովացիք խոշոր արտոնություններ ձեռք բերեցին Բոսնուսդից: «Խաչակիր պետությունների իշխանները սիրիական համարյա վոչ մի ծովափնյա քաղաք չզբաղեցին առանց իտալական նավատորմիղների աջակցության, ընդվորում մեծ մասամբ դրանք ձենովացիներ էին, առանձին ղեպքերում, առանձնապես Տիրոս կարևոր քաղաքը նվաճելիս՝ վենետիկցիք¹⁾: Ճենովացիք նույնիսկ կարողացան իրենցից կախման մեջ դնել հարավային Փրանսիական քաղաքները, վորոնք առևտրական կապեր ունեին Արևելքի հետ: Իտալացիք հաց էին ներմուծում սիրիական աղքատ պետությունները: Հացի ներմուծումն ազատված եր ամեն տեսակ մաքսից վոչ միայն քրիստոնյա, այլև արաբ վաճառականների համար: Վենետիկցիք Յերուսաղեմի թագավորի վրին փաթաթեցին մի ստրկակոն առևտրական պայմանագիր (1124 թ.), վորով նրանք վոչ միայն կատարյալ եքստերիտորիալ իրավունք ձեռք բերին իրենց առևտրական բնակավայրերի համար, այլև առևտրի այնպիսի ազատութուն, «ինչպես բուն Վենետիկում»: Նրանք ստիպեցին այս պայմանագիրն ըստորագրելու Յերուսաղեմի թագավորության ամենից ազգեցիկ բարոններին, և վերջիններս պետք է խոստանային ապագայում ձանաչելու միայն այնպիսի թագավորի, վորը կհաստատի այս պայմանագիրը²⁾: Յեվ այսպես, խոսելով Պրուսցի խոսքերով «առաջին խաչակրաց արշավանքի հարուցած հսկայական հույսերից վոչ մեկը չիրականացավ և ուղղակի հակառակ այն գեղազարդված տեղեկությունների, վոր յեկեղեցին տարածում եր, հավատացիալներից թագցնելով տխուր իրականությունը, Պաղեստինի քրիստոնյա պետությունները չավազանց խզուկ կացության մեջ էին»³⁾:

Ռիանը խաչակրաց արշավանքները բնորոշել և իրրև կրոնական պատերազմներ, վոր քարոզում եր յեկեղեցին, վորը մղե-

¹⁾ Röhricht, հիշ. աշխ., էջ 212; Schaube, հիշ. աշխ., էջ 123—133; Heyd, հիշ. աշխ., 1-ին հ., էջ 147—161, 200—204:

²⁾ Fulcher. Carnot., RC, 3-րդ հ., էջ 445; Guilelm. Tyr., RC, 1-ին հ., էջ 550:

³⁾ Prutz, հիշ. աշխ., էջ 91:

լու կոչ էր անում նա, յեկեղեցական արտոնութիւններ խոստանալով, վոր մղում էյին շատ թե քիչ ինտերնացիոնալ բանակները, և վորոնք ուղղակի, թե անուղղակի նետապնդում էյին սուրբ վայրերի նվաճման նպատակը¹⁾: Այս բնորոշումը զուտ ձեւական է և նվազագույն չափով իսկ չի ընդգրկում խաչակրաց արշավանքների ելութիւնը: Առաջին խաչակրաց արշավանքի ուսումնասիրութեան հիման վրա մենք կարող ենք այս բնորոշմանը հակադրել մի ուրիշ բնորոշում:

Առաջին խաչակրաց արշավանքն առաջացավ վորպես արդյունք ֆրանսիական գյուղացիութեան մասսայական փախուստի և ասպետների յերկպառակութիւնների: Կլյունիական կաղմակերպութեամբ միացած ֆրանսիական ֆեոդալների վերնախավերը, ցանկանալով անվտանգ դարձնել իրենց կալվածքները, այս շարժումն ուղղեցին դեպի Արևելք, մատասներին իրենց յենթարկելու համար ոգտագործելով քարոզիչներ, ինչպես Պետրոս Անապատականը, և արշավանքին առաջնորդներ տալով հանձին նեղ պայմանների մեջ գտնվող առանձին սենյորների: Խաչակիր զորքի մեջ շարունակում էյին գործել դասակարգային սուր հակասութիւններ: Խաչակիրների հակայական մասսաներ կոտորվեցին ճանապարհին կամ կովի մեջ վոչ առանց առաջնորդների մեղքի, նրանց աննշան մասը Սիրիայում ձեռք քերեց գոյութեան համեմատաբար լավ պայմաններ տեղական բնակչութեան ստրկացման միջոցով:

Իհարկէ, միայն առաջին խաչակրաց արշավանքի ուսումնասիրութիւնը չի կարող հիմք տալ խաչակրաց արշավանքների մասին յեզրակալութիւններ անելու պահասարակ: Բայց արդեն այս ուսումնասիրութիւնը տարակույս է հարուցում, թե արդոք խաչակրաց արշավանքներն առհասարակ միասնական պատմական յերևույթ են իրենց ընութեամբ: Խաչակրաց արշավանքների հետ կապված առանձին տեսակի գրականութեան գոյութիւնը հազիվ թե կարողանա բավականաչափ հիմք ծառայել այս հարցին դրական պատասխան տալու համար: Առաջին խաչակրաց արշավանքի ուսումնասիրութիւնը թույլ է տալիս մեր-

ժելու խաչակրաց արշավանքների վերաբերյալ միջանի թեորիաներ: Առաջին թեորիան մենք կարող ենք արտահայտել Մտեվինսոնի խոսքերով. «Խաչակրաց արշավանքները յերկրորդ փուլն են քրիստոնեայութեան ու իսլամի, Ասիայի ու Յեվրոպայի դարավոր և դեռևս չավարտված պատերազմում, վորն սկսվել է այն ժամանակ, յերբ արաբական խիզախ ցեղերը Սիրիայի ու Աֆրիկայի վրայով խուժեցին Իսպանիա: Ուստի այս շարժման ազդուրը վոչ թե քրիստոնեական պարտքի բարձր գիտակցութիւնն է, այլ մուսուլմանների հարձակումն Արևմտյան Յեվրոպայի վրա¹⁾»: Անգլիական բուրժուական գիտութեան ներկայացուցչի այս կարծիքին համամիտ է ուս բուրժական պատմաբան Ֆ. Ի. Ուալենսկին, վորի տեսակետով խաչակրաց արշավանքները հանդիսանում են «Յեվրոպայում ու Ասիայում մինչև այժմ ել գերելխանութիւնը բաժանող յերկու աշխարհների բաշխման մի կարգող և ներածական գլուխ արևելյան հարցի պատմութեան մեջ, վորի լուծման մեջ Ռուսաստանին վիճակված է գործոն մասնակցութիւն ունենալու»: Իրականում առաջին խաչակրաց արշավանքը բնավ հետևանք չէր մուսուլմանական վտանգի: Ո. Ա. Իորիաշ-Ռոժդեստովենսկայան խաչակրաց արշավանքները համարում է «հակայական չափերով ուխտադնացութիւն, վորն ընդարձակեց այն հեղեղատների հունը, վորոնք 11-րդ դարից շատ առաջ գլորվում էյին դեպի Արևելք»: Այս բնորոշումը զուտ ձեական է (խաչակիրներն իրենց անվանում էյին ուխտավորներ), իդեալիստական, վորը կրոնական շարժառիթները համարում է վճռական, վորպիսի հանգամանքը բացահայտորեն հակասում է իրականութեան: Լյուշերն եկեղեցիկորեն ընդունում է բազմատեսակ ֆալստորներ. ուխտագնացութիւն, ասպետական արշավանքներ յեկեղեցու ղեկավարութեամբ, արտագաղթի անհրաժեշտութիւն, կողոպտման հակումներ, ժողովրդական հուզումունքներ, առևտրական շահեր և պապին և վերագրում խաչակրաց արշավանքի հաջող նախագիծը, վորը բավարարեց բոլոր դասակարգերի ցանկութեանը²⁾: Այստեղ արդի բուրժուաների վերդասակարգային պետութեան թեորիաները բացահայտ կերպով փոխադրվում են հեռավոր անցյալը: Լամպրեխտը գտնում

¹⁾ Riant, inventaire critique des lettres des croisades, Archive de l'Orient latin, Paris, 1888:

¹⁾ Stevenson, հիշ. աշխ., էջ 265:

²⁾ Luchaire, հիշ. աշխ., էջ 229:

և, վոր խաչակրաց արշավանքները յուրատեսակ արտագաղթ էին¹⁾: Այս բացատրութիւնը գեւհիկ-անտեսական և, վոր չի հայտաբերում այս արտագաղթի դասակարգային արմատները:

Սաչակրաց արշավանքներին հաճախ առաջադիմական դեր են վերագրել: Գաստոն Պարին գտնում էր, վոր ամբողջ ասպետութեան գնալուց հետո Ֆրանսիայում, իբրև իշխանութեան ներկայացուցիչներ, մնացին միայն ծերերն ու չքավորները, կամ վախկոտ բարոնները և վոր ժողովուրդն այս բանն անձնապես ոգտագործեց զանազան ֆեոդալական պարհակներէից ազատվելու համար²⁾: Յլակը գտնում է, վոր խաչակրաց արշավանքները սեփականութեան մօրիլիզացիայի և ֆեոդալական դասակարգի շարքերում առաջացած ամառացումների հետեանքով դյուրացրին ձանապարհը դեպի կոմունալ շարժումը³⁾: Ո. Ա. Գորիաշ-Ռոտ-դեստովենսկայան այս դերը տեսնում է նրանում, վոր ցածր կոչման տեր շատ մարդիկ, վոր մասնակցել էին Սիրիայի նվաճմանը, բարձրացան մինչև ասպետների կոչման, լայն ձեղք բացելով ֆեոդալական որևէքի պատենշի մեջ: Իսկապես առաջին խաչակրաց արշավանքը խոր պահպանողական ազդեցութիւն գործեց Յիվրոպայի հասարակական կարգերի վրա: Հետացան դյուրացիութեան ու ասպետութեան ամենամահանգիստ տարրերը, հեռացավ գյուղացիութեան ու ասպետութեան սպառնալիքը, հեռացավ գյուղացիական ապստամբութիւնների սպառնալիքը, վորոնք այն ժամանակ վտանգավոր էին մանավանդ այն պատճառով, վոր ասպետութեան մեծ մասի անապահովութեանը թուլացրեց գերիշխող դասակարգին: Այսպիսով, խաչակրաց արշավանքը լավագույն հնարավորութիւն ստեղծեց կոնսոլիդացիայի և կենտրոնացման յինթարկելու ֆեոդալական Ֆրանսիան:

Յնթխ խաչակրաց արշավանքները մասսայական շարժում էին, իսկ նրանք անտարակույս այդպիսին էին, ապա այս հանգամանքը պետք է ստիպի մեզ ավելի շատ ուշադրութիւն դարձնելու այն աղբյուրներին, վորոնք գտնվում են ժողովրդական ավանդութիւնների ազդեցութեան տակ, ինչպես, որինակ, առա-

1) Lamprecht, հիշ. աշխ., էջ 119:
2) G. Paris, La chanson d'Antioche, 6:
3) Flach, հիշ. աշխ., 2-րդ հ., էջ 399:

ջին հերթին Գիլյոմ Տիրացուն: Զիբելը, վոր խաչակրաց արշավանքներին մոտեցել է զերազանցապես իբրև պապի և իշխանների գործի, իբրև ռազմա-դիվանագիտական պատմութեան մի իրադարձութեան, թերագնատում էր այս աղբյուրները: Կուզելիք, Կլեյնը, Հագենմայերը և ուրիշներն սկսեցին վերանայել Զիբելի տեսակետներն առանձին աղբյուրների վերաբերմամբ: Բայց այս վերանայումն սկզբունքային չէր, ուստի և անբավարար չափով վճռական:

Մանրամասն ուսումնասիրել մյուս խաչակրաց արշավանքները Յիվրոպայի ընդհանուր պատմութեան շրջանակներում, սրա հիման վրա վորոշել առանձին արշավանքների փաստական դերը ֆեոդալական Յիվրոպայի զարգացման մեջ, դասակարգային տեսակետից քննադատորեն վերլուծել խաչակրաց արշավանքների պատմագրութիւնները և վերանայել աղբյուրների գոյութիւն ունեցող գնահատութիւնը—սրանք են մարքսիստ պատմաբանի խնդիրները խաչակրաց արշավանքների բնագավառում:

Աղբյուրների կրճատ և անվանումներ

- R—Recueil des Historiens des Gaules et de la France.
- RC—Recueil des Historiens des Croisades.
- RC grecs —Recueil des Historiens Croisades, grecs.
- RC arm.— " " " arméniens
- RC orient.— " " " orientaux
- Muratorius—Muratori, Rerum italicarum scriptoris.
- Migne, P. L.—Migne, Patrologiae latinae cursus completus.
- MG SS—Monumenta Germaniae Histrica, Scriptores.

